

ԳԱՄԻՃԼԻԻ ՄԵՋ ՀԱՅԵՐՈՒ, ՔԻԻՐՏ ԵՒ ԱՐԱՐ ԱՇԻՐԱՊԵՏՆԵՐՈՒ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՍՅ ՀՈԳԵԽՐ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԱՐՅԱՆԻ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ՀԱԿԱՔ



Հովանաւորութեամբ Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեանի, Կիրակի, 3 Սեպտեմբեր 2023-ին Գամիշլիի Ազգային Առաջնորդարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Արցախի մէջ շրջափակուած բնակչութեան զօրակցական հաւաք, կազմակերպութեամբ Սուրիոյ Յայ Դատի Գամիշլիի Ենթայանձնախումբին:

Ժողովրդային հաւաքին ներկայ էին Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Յայր Լեւոն Վրդ. Եղիայեան, Գամիշլիի քրիստոնէայ համայնքներու հոգեւոր հայրեր, «Պասս» կուսակցութեան Գամիշլիի գրասենյակի ղեկավարները:

Բժշկ. Մարի Մելքոն
Շար. Էջ 12 ➤

ՆԱԽԱՐԱՐ ՄԵՔՏԱՏ. «ԹՈՒՐԻՈՅ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ՄԻԱԿ ՄԻՋՈՅՆ Է ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԽՐՄԱՆ»

Դամասկոսի Պետական Համալսարանէն ներս ընթացք առաւ Լատինական Ամերիկայի պետութիւններու Արաբական Հաստատութիւններու Միութեան 50-րդ խորհրդաժողովը, որպէս զօրակցութիւն Սուրիոյ՝ իր դիմագրաւած ահաբեկչական պատերազմին եւ տնտեսական պատժամիջոցներուն լոյսին տակ:



Ի ն ո Ր Ի Ր Դ ա ժ ո ղ ո վ ի ն կը մասնակցին գաղթականներու յատուկ հաստատութիւններու նախագահներ, անդամներ եւ Լատինական Ամերիկայի երկիրներուն մէջ արաբական մշակութային կեդրոններու ներկայացուցիչներ:

Բացման իր խօսքին մէջ Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ խօսք առնելով ըսաւ, որ սուրիական հողեր թափանցած ամերիկեան եւ թրքական բռնատիրութիւնները, Սուրիոյ հարստութիւններու թալանն ու զինեալ ահաբեկչական խմբաւորումներու աջակցութիւնը վերջ պիտի գտնեն շնորհիւ Տէր Զօրի, Հասիշի, Ռաքքայի եւ այլ շրջաններու մէջ մեր հզօր ժողովուրդի պայքարին:

Անդրադառնալով Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու վերականգնումին, Մըքտատ շեշտեց, որ Թուրքիոյ սուրիական հողերէն դուրս գալը նման վերականգնումի հասնելու միակ միջոցն է:

Այս եզրակացութիւնով ըսաւ, որ ԱՄՆ մէկ կողմէ զօրակցութիւն կը յայտնէ թրքական ուժերու, միւս կողմէ անջատողական խմբաւորումներու՝ Սուրիոյ պետութիւնը կազմաքանդելու յստակ միտումով:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԵԿԼԱՓՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ ՄԵՋ ԲԱՅՈՒԷՅԱԼ ՍՈՒՐԻՈՅ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԼՍԱՐԱՆ



Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) արեւելագիտութեան բաժնիին մէջ բացումը կատարուեցաւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան լսարանին, ուր ուսանողները կարելիութիւն կ'ունենան խորապէս ծանօթանալու Սուրիոյ մշակոյթին:

«Արմէնիքս»-ի համաձայն, Շար. Էջ 4 ➤

«ՏՕՏ ԱՐՅԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԿԱՔ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՅԱՆԻ

Ազատութեան հրապարակին վրայ այսօր՝ 2 Սեպտեմբերին, Արցախի Հանրապետութեան անկախութեան 32-ամեակին առիթով, ընթացք առաւ ընդդիմութեան ժողովրդային հաւաքը, որ կը կրէր «ՏՕՏ Արցախ» կարգախօսը:

Ժողովրդային հաւաքին նպատակն էր Հայաստանի ու Սփիւռքի միասնական ծայրը հնչեցնել Արցախի ու համայն հայութեան համար այս ծանր ու վճռական փուլին:



Շար. Էջ 3 ➤

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱԿՈՐ ՆՈՐ ՓՈՒԼ ԿԸ ԹԵՒԱԿՈՒՆԷ

Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ բախումները քիւրտերու եւ արաբ աշիրեթներու միջեւ մէկ կողմէ քրտական գործօնը առանձնացնելու ամերիկեան ճիգերուն մասին կը խօսի, արաբ աշիրեթները դուրս ձգելու շրջանին վերահսկողութեան դաշտէն, միւս կողմէ կ'ընդգծէ Տեր Չօրի շրջանին մէջ արաբ բնակչութեան մեծ համեմատութիւնը, հետեւաբար ալ շրջանը զուտ քրտական գօտի դարձնելու ամերիկեան փորձերուն դէմ նոր ուժի մը ձեւաւորումը:

Միւս կողմէ Սուէյտայի մէջ տնտեսական ներկայ վիճակին շուրջ բողոքի խաղաղ ցոյցեր գլուխ կը ցցեն, Յալէպի արուարձաններուն մէջ թրքական ուժեր թիրախ կը դարձնեն քիւրտերը, իսկ սուրիական բանակը թիրախ կը դարձնէ Թալ Ռըֆաաթի ահաբեկչական խմբաւորումները:

Անդին Սուրիոյ տնտեսական պայմանները կը ծանրանան, սղաճն ու սուրիական լիրային արժեզրկումը անել կացութեան կը մատնեն ժողովուրդը: Մարդիկ իրենց կենսական կարիքները ապահովելու դժուարութիւն ունին այս փուլին, մանաւանդ որ դաժան ձմեռը կը մօտենայ, իսկ վառելիքի, յատկապէս սննդամթերքի գիները անտրամաբանական ոստում կ'արձանագրեն:

Կը թուի, թէ աշխարհաքաղաքական զարգացումները իրենց ազդեցութիւնը կը թողուն սուրիական ճակատին վրայ եւս: Արաբական աշխարհին բացուելու Սուրիոյ ճիգերը ձախողութեան մատնելու եւ Սուրիոյ քարիւղի հանքերէն եւ հիւսիսային շրջանի ցորենի եւ այլ հարստութիւններէն օգտուելու եւ Սուրիան մասնատելու մրցավազը կը շարունակուի, յատկապէս եթէ նկատի ունենանք վերջերս, «ալ-Մայատին» կայանի տուեալներուն համաձայն, Միջերկրականի սուրիական բաժինին մէջ յայտնաբերուած քարիւղի նոր հորերը:

Սուրիա իր կարգին կը ջանայ նոր օրէնքներով, հրամանագիրներով գէթ տնտեսական տագնապի մեղմացման նպաստել, միւս կողմէ կը շարունակէ իր դիւանագիտական ճիգերու շեշտադրումը՝ արաբական աշխարհին հետ յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ:

Այս բոլորին կողքին, Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման ոչ մէկ քայլ կ'ակնկալուի այս փուլին, որովհետեւ Թուրքիա կը շարունակէ բռնագրաւուած պահել սուրիական տարածքներ, հետեւաբար ալ սուրիական կողմին պայմանները չյարգել: Այս ընթացքով սուրիական կողմը, նոյնիսկ Ռուսիոյ միջնորդութեամբ, պիտի չընդունի յարաբերութիւններու վերսկսման որեւէ փորձ, որովհետեւ կտրականապէս կը մերժէ թրքական ուժերու ապօրինի ներկայութիւնը եւ աներկբայօրէն կը պահանջէ այդ ուժերուն Սուրիայէն դուրս գալը:

Սուրիոյ յառաջիկայ շրջանին վարած քաղաքականութենէն եւ դաշնակիցներու հետ համաձայնութիւններէն շատ բան կախեալ է պարզելու, թէ սուրիական տագնապը լուծման ափ հասցնելու ճիգերը պիտի արդիւնաւորուին, թէ սրման նոր փուլ թեւակոխեն:

«Գ.»

-Գահիրէի մէջ Արաբական Լիկայի կեդրոնէն ներս արաբական-ճափոնական քաղաքական երկխօսութեան ժողովի շրջագիծէն ներս, Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ խորհրդակցեցաւ ժողովին մասնակից Արաբական Միացեալ Էմիրութիւններու պատուիրակութեան նախագահ, պետական նախարար Ահմետ Ալի Սայեդի հետ երկու երկիրներուն յարաբերութեան շուրջ, որ զարգացում ապրեցաւ Սուրիոյ նախագահ Պաշշարալ-Ասատի եւ Էմիրութիւններու նախագահ Մուհամետ պըն Չայետ ալ-Նահեակի օրօք: Նախարար Մըքտատ տրախտագիտութիւն յայտնեց Սուրիան ցնցած երկրաշարժի դժուար պայմաններուն լոյսին տակ Էմիրութիւններու աջակցութեան եւ մարդկային կեցուածքին համար:



Իր կարգին Սայեդ Էմիրութիւններու ժողովուրդին եւ ղեկավարութեան ողջոյնները փոխանցեց Սուրիոյ ժողովուրդին եւ ղեկավարութեան, յայտնելով, որ իր երկրին փափաքն է, որ Սուրիան ամենամօտ ժամանակամիջոցին վերականգնի եւ տարածաշրջանին ու արաբական երկիրներուն մէջ իր նախկին դրական դիրքին վերադառնայ:

-Գահիրէի մէջ Արաբական Լիկայի կեդրոնէն ներս արաբական-ճափոնական քաղաքական երկխօսութեան ժողովի շրջագիծէն ներս, Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ հանդիպում ունեցաւ ժողովին իր մասնակցութիւնը բերած Սեուտական Արաբիոյ պատուիրակութեան նախագահ, ԱԳ փոխնախարար Ռաւիտ ապտուլ Բարիմ Խրեճիի հետ:

Հանդիպումին ընթացքին կողմերը յայտնեցին իրենց նախանձախնդրութիւնը երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման գծով:

Կողմերը գոհունակութիւն յայտնեցին ժատտէի մէջ արաբական գագաթնաժողովի շրջագիծէն ներս Նախագահ Ասատին եւ Իշխան Մուհամետ պըն Սալմանի հանդիպումէն ետք սուրիական-սեուտական յարաբերութեան մակարդակին գծով:



Հանդիպումին ընթացքին կողմերը ներկայացուցին Նաեւ միացեալ հետաքրքրութիւն ունեցող կարգ մը հարցեր, ինչպէս Նաեւ համաձայնեցան խորհրդակցութիւնն ու աշխատանքներու համակարգումը շարունակել:

-Հասիչէի Ջուրի Ընկերութիւնը յայտնեց, որ «Ալուք» ջրամուղ կայանը բանիլ սկսաւ եւ կայուն վիճակի մէջ է, որուն հետեւանքով Հասիչէի հարաւային շրջաններուն ջուրը հասանելի դարձաւ:

Ընկերութեան տնօրէն երկրչփ. Մուհամետ Օսման յայտնեց, որ նորոգութեան աշխատանքները ամբողջանալէ ետք կայանը իր սովորական կարողութեամբ կ'աշխատի, անէցնելով, որ ընկերութիւնը ջուրի որոշ ժամերու անջատման յարմար ծրագիր մը պիտի ճշդէ, որպէսզի ջուրը հասանելի դառնայ բոլոր շրջաններուն:



Յիշենք, որ «Ալուք» ջրամուղ կայանը կը գտնուի Ռաս ուլ Այնի թրքական ուժերուն հսկողութեան տակ ամուսնած շրջանին մէջ: Ան աշխատանքէ դադարած էր չորս ու կէս ամսուրնէ ի վեր, որովհետեւ գինեալներ կը կակիւխն ջուրին կայան մուտքը եւ կը խափանէին նորոգութեան աշխատանքները:

-Սոչիի մէջ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հետ ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին շեշտեց Սուրիոյ գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման անհրաժեշտութիւնը, հաստատելով, որ Սուրիոյ ժողովուրդը միայն իրաւասու է իր երկրին ապագան ուրուագծելու, զանց առնելով արտաքին միջամտութիւնները:



Լուրեր Հայաշխարհին

Արձանի շարժումներն օրումն Արմավիրի Ազգային ժողովի նստազուրահի ինստիտուտը Գործառնականության Գործառնականության

Արցախի Հանրապետության օրումն առիթով Ազգային ժողովի նստազուրահի ինստիտուտը Գործառնականության Գործառնականության

Շնորհալուրանքի խօսքին մեջ Միացեալ Նահանգներու Բոնկրեայի հայկական հարցերով յանձնախումբի անդամներ, քննարկականներ Ֆրենք Փալոնը, Էտրն Շիֆը, Կոնս Պիլիբաքիսը եւ Տեյվիտ Վալատանը:

Շնորհալուրանքի խօսքին մեջ Միացեալ Նահանգներու Բոնկրեայի հայկական հարցերով յանձնախումբի իր գորակցութիւնն ու յանձնառութիւնը կը յայտնէ Արցախին՝ անկախութեան աւելի քան երեք տասնամեակներու տօնակատարութիւններու կապակցութեամբ:



«Մենք կը շարունակենք աջակցիլ ձեր ժողովուրդին, որ անհաւանական տոկոսունութիւն կը ցուցաբերէ Ատրպէյճանի կողմէ Լազիկի միջանցքի շրջափակման հետեւանքով յառաջացած սնունդի, դեղորայքի եւ առաջին անհրաժեշտութեան այլ պարագաներու համատարած պակասի պայմաններուն մէջ: Մենք կը շարունակենք կոչ ուղղել Միացեալ Նահանգներուն եսկան օգնութիւն ցուցաբերել Հայաստանի մէջ գրտնուող Արցախէն տեղահանուած ընտանիքներուն եւ անոնց, որոնք քաջաբար կը մնան ձեր երկրին մէջ» կը նշուի ուղերձին մէջ:

Բոնկրեայականները կը նշեն, որ պիտի շարունակեն ճնշում գործադրել վարչակազմին վրայ, որպէսզի անկախ օգտագործէ բոլոր առկայ դիւանագիտական գործիքները՝ դադարեցնելու Ալիեւի վարչակարգի անօրինական գործողութիւնները, որոնք, անոնց համաձայն, յստակօրէն կը համապատասխանեն ցեղային գտումներու սահմանումին:

«Շարունակուող մարդասիրական ճգնաժամը ցոյց տուաւ միջազգային խաղաղողներու գործողութիւններու եւ Ալիեւի վրայ ճնշումներու ծայրայեղ անհրաժեշտութիւնը՝ ստիպելու գայն վերադառնալ Արցախի ժողովրդապարական ճանապարհով ընտրուած պաշտօնեաներուն հետ ուղիղ բանակցութիւններուն:

Արցախը պետք է կարենայ անմիջականօրէն մասնակցիլ իր ապագայ կարգապահական շուրջ բանակցութիւններուն եւ ապահովել տեւական ու կայուն խաղաղութիւն», նշուած է ուղերձին մէջ:

ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԼ ՀՈԳԵՒՐ ՊԵՏԵՐՈՒ ԵՒ ՀԱՅ ԲԱՐԱԲԱԿԱՆ ԿՈՄԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՅԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹԻՒՆ՝ ԱՐՅԱՆԻ ԶՕՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին հրաւերով, մասնակցութեամբ հայ հոգեւոր պետերու եւ երեք հայ քաղաքական կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններու ներկայացուցիչներուն, Չորեքշաբթի, 6 Սեպտեմբեր 2023-ին, տեղի ունեցաւ խորհրդակցական յատուկ նիստ, միակ օրակարգ ունենալով Արցախի ժողովուրդին գօրակցելու հրամայականը:



Նիստին մասնակցեցան Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ.Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ Վերապատուելի՞Փայ Յայտոսեան, հայ քաղաքական կուսակցութիւններու

բարձրագոյն մարմիններու ներկայացուցիչները՝ Տիար Յակոբ Տէր Խաչատուրեան (ՀՅԴ), տոքթ. Ալեւտիս Տազետեան (ՌԱԿ) եւ տոքթ. Վազգէն Համալեան (ՄԴՀԿ), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան քաղաքական ժողովի համատեւապետները՝ Տեարք Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գրիգոր Մահսերեճեան եւ Կաթողիկոսութեան համահայկական խորհրդաժողովները համակարգող Տիար Շահան Գանտահարեան:

«SOS ԱՐՅԱՆ»...

Սկիզբ՝ էջ 1

Հաւաքի մեկնարկին՝ Հայաստանի ու Արցախի պետական օրինակներէն վերջ Շուշան Պետրոսեան կատարեց «Երազ Իմ Երկիր Հայրենի» երգը:

Տէրունական աղօթք եւ օրհնութեան խօսք արտասանեց Տաւուշի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Բագրատ Արքեպիսկոպոս Գալըստանեան:

Իր խօսքին մէջ ան երախտիքի խօսք յղեց Արցախի անկախութեան համար նահատակներուն՝ Ազատութեան հրապարակին վրայ գտնուող հաւաքի մասնակիցներուն:

«Ուզում եմ որչ սրտով, որդիական սիրով ու խոնարհութեամբ ձեզ բողոքի, իմ հոգեւոր եղբայրների հետ միասին, բերել Հայոց հայրապետի, Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Գարեգին Բ. հայրապետի օրհնութիւնը, սերը, ողջոյնը, քաջալերելքները ու յաղթանակների համար: Վեհափառ օրհնութիւնը, ողջոյններն ու սերը ձեզ՝ սիրելի, իմ շատ սիրելի՞ ժողովուրդը:

Ես յաղթեցի աշխարհին՝ այս խօսքերը հնչեցին մեր տիրոջ կողմից այն ժամանակ, երբ շուրջբոլորը տրտմութիւն էր, կասկած, յուսահատութիւն, ուրացում, անորոշութիւն, վախ՝ պատուած միայնութեան եւ լքուածութեան զգացումով: Առջեւում տառապանք էր ու խաչելութիւնը, մարդկային մտքի համար անհասկանալի ու անընդունելի, սակայն այդ է յաղթանակի ու յարութեան ճանապարհը: Եւ հէնց այս մղթնողորտում է հնչում տէրունական պատգամը: Աշխարհում դուք ներութիւն էք կրելու, բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին: Այս անվերջանալի պատգամը հնչում է նաեւ այսօր»:

Հաւաքին ելոյթներ ունեցան շուշեցի Նարե Սիմոնեան, «Հայաքուն» նախաձեռնութեան համակարգող Ալեւտիք Զալապեանը, «Բաթօն Տէր Ա» նախաձեռնութիւնը, 44-օրեայ պատերազմում զոհուած Վաչական Մանուկեանի հայրը՝ գրող Խաչիկ

Մանուկեանը, քաղաքագետ Թեւան Պօղոսեանը, 44-օրեայ պատերազմին զոհուած Յակոբ Ռոստոմեանի հայր՝ Արա Ռոստոմեանը, «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանեանը, ԱԺ «Պատիւ Ունեմ» խմբակցութեան քարտուղար Տիգրան Աբրահամեանը, Ղարաբաղեան շարժման ակունքներում կանգնած, Ղարաբաղ կոմիտէի ղեկավար Վազգէն Մանուկեանը, ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանը:

Տեսուղերձով ժողովրդային հաւաքի մասնակիցներուն իր ողջոյնի խօսքը ուղղեց ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհրդի համանախագահ Մուրատ Փափագեանը:

Այս հաւաքը հերթական հաւաք է, այն ունի առաքելութիւն. իր ելոյթին մէջ նշեց Իշխան Սաղաթելեան:

«Այսօր հայ ժողովուրդը աշխարհի տարբեր կողմերում միջազգային հանրութեան, մեր բարեկամ, դաշնակից երկրներին ու մեր թշնամիներին շատ յստակ՝ ուղիղ ասում է՝ Հայաստանի իշխանութիւններին մէջտեղ բերած յանձնուելու օրակարգը հայ ժողովրդի օրակարգը է, հայ ժողովուրդը մերժում է այդ օրակարգը եւ պատրաստ է շարունակել պայքարը իր հայրենիքի համար»:


Իշխան Սաղաթելեան յայտարարեց, որ ժողովրդային յաջող հաւաքը պետք է ուշանայ, նշեց, որ իշխանափոխութեան հասնելու շուրջ ընդդիմադիր դաշտին մէջ աշխոյժ քննարկումներ կ'ընթանան:

«Սա մէկ հոգու, մէկ անձի որոշելիք է, սա արժանապատուութեան, միջեւ վերջ գնալու պայքար է, մեր յաջող հանդիպումը շատ չի ուշանալու, Արցախը երբեք Ատրպէյճանի կազմում չի լինելու: Չհիասթափուե՛լ, չյուսահատուե՛լ, չլռել՛ եւ գնալ միջեւ վերջ», ըսաւ ան:

Ժողովրդային հաւաքը աւարտին հասաւ Շուշան Պետրոսեանի հանրածանօթ «Արցախ» երգի կատարմամբ:

Աւելցնենք, որ հաւաքին ներկայ էին նաեւ ՀՀ 2-րդ եւ 3-րդ նախագահներ Ռոպերթ Բոչարեանը եւ Սերժ Սարգսեանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



**Ի յիշատակ՝
Տարօն Տուրութեան
Հայրենակցական Միութեան
հին ու նոր ննջեցեալներուն**

Հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 10 Սեպտեմբեր 2023-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցու մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Նիկոլ Աղբալեան» սրահէն ներս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ, ԹՈՒՐԿԻՈՅ «ԱՐՏԱԳՐԱՆՔԸ» ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊՈՒՆԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ

Sputnik Արմենիայի հետ գրոյցի ընթացքին, Սուրիոյ դեսպան Նորա Արիսեան կը յիշեցնէ Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն մէջ կարմիր գծերու, ինչպէս նաեւ երկրաշարժին հետեւանքները յարթահարելու մասին: Զայաստան այն քիչ երկիրներէն է, որ անդադար կ'աջակցի Սուրիոյ, կը շեշտէ ան:

Բազմաթիւ երկիրներ, ընկրկելով Արեւմուտքի ճնշումներուն ընդառաջ, մարդասիրական օգնութիւն չեն առաջարկած Սուրիոյ՝ Նոյնիսկ ակտիւ երկրաշարժէն ետք, մինչդէռ Զայաստան այն քիչ երկիրներէն է, որ մինչեւ օրս կը շարունակէ օգնել, Sputnik Արմենիայի հետ գրոյցի ընթացքին յայտնած է Զայաստանի Զանրապետութեան մէջ Սուրիոյ Արաբական Զանրապետութեան դեսպան Նորա Արիսեան:

Վերականգնումը՝ երկրաշարժէն ետք

Երկրաշարժի հետեւանքները յարթահարելու համար Սուրիոյ կառավարութիւնը ստեղծած է յատուկ Ազգային հիմնադրամ, իսկ տուժածներուն համար ստեղծած է քաղաքացիներու սպասարկման կետեր:

«Պետական հիմնադրամի առաջնահերթութիւնը քանդուած բնակարաններու սեփականատէրերուն աջակցութիւն ցուցաբերելն է: Ըսեմ, որ արդէն իսկ ուսումնասիրուած են վնասները, պատրաստուած են տուժածներու ցանկերը», ղիտել կու տայ դեսպանը:

Անկախ այդ բոլորէն, Տեղական Ինքնակառավարման Նախարարութիւնը եւ Նահանգապետարանները կը հետեւին մարդոց ընթացիկ կարիքներուն եւ անոնց քանի մը փուլերով օգնութիւն կը տրամադրեն:

Նոյնաբովանդակ աշխատանք կը կատարէ հայ համայնքը՝ եկեղեցին (Զայոց ազգային առաջնորդարանները) եւ համայնքային կառոյցները, որոնք եւս կ'աշխատին աջակցիլ տուժածներուն, մասնաւոր վնասուած բնակարանները վերականգնելու հարցով:



Քիչերն մէկը

Եթէ Թուրքիոյ օգնութիւն ցուցաբերած են քանի մը տասնեակ երկիրներ, Սուրիոյ՝ շատ քիչերը, այդ կարգին՝ պատրաստ (հաւաքական) տուներ տրամադրելու առումով:

«Դժբախտաբար, ակնկալուածէն շատ ակտիւ չեն մարդասիրական առաքելութիւններ կը գործեն Սուրիոյ մէջ, ու պատճառները յստակ են՝ Արեւմուտքէն, մասնաւորապէս՝ ԱՄՆ-ի կողմէ հարկադրանքն է ու պարտադրուած պատժամիջոցները:

Կը փափաքիմ առիթը օգտագործել կրկին շնորհակալութիւն յայտնելու Զայաստանի կառավարութեան եւ ժողովուրդին ցուցաբերած աջակցութեան համար», ըսաւ դեսպանը:

Ան յիշեցուց, որ Զայաստան 2019-էն իսկ Սուրիոյ մէջ կեւորականացնէ մարդասիրական առաքելութիւն, որ մինչեւ օրս մարդասիրական ակնազեծման եւ բժշկական ծառայութիւններ կը մատուցէ Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ, ինչ որ մեծապէս կը գնահատուի երկրի կառավարութեան եւ ժողովուրդին կողմէ:

Ահաբեկչութիւնը Թուրքիոյ «արտադրանքն» է

Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման հարցին մէջ Սուրիոյ մօտեցումները չեն փոխուած եւ ինչպէս նաեւ արդէն Աստանայի ձեւաչափով հանդիպման ընթացքին, որուն մասնակցած են Սուրիոյ, Ռուսիոյ, Իրանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց փոխնախարարները, կը յիշեցնէ դեսպանը: Որեւէ արդիւնք, կ'աւելցնէ ան, պետք է հիմնուած ըլլայ Թուրքիոյ կողմէ իր ուժերը Սուրիոյ տարածքէն դուրս բերելու հաստատման վրայ՝ յըստակ ժամանակացոյցով եւ դուրսբերման գործնական քայլերով: Ասիկա հիմք պիտի հանդիսանայ տեղահանուածներու վերադարձին, ահաբեկչութեան բոլոր ձեւերուն դէմ պայքարին եւ երկու երկիրներու յարաբերութիւններուն անջնջող այլ հարցերու քննարկման համար:

Թուրքիոյ յայտարարութիւնները Սուրիոյ ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան մասին գործերը ակտիւ բարդացուցած են, եւ քանի դէռ Թուրքիա կը բռնագրաւէ սուրիական հողերը, մենք չենք կրնար դէպի խաղաղութիւն քայլ առնել, ընդգծեց Սուրիոյ դեսպանը:

Սուրիոյ տարածքին թրջական ուժերու անօրինական ներկայութիւնը կը խոչընդոտէ կայունացումը՝ ահաբեկչներու շարունակական աջակցութեան եւ պաշտպանութեան պատճառով, ակտիւ Սուրիոյ դեսպանը: Իր վերջին ելոյթներէն մեկուն ընթացքին, Սուրիոյ նախագահ Պաշշարալ Ասատ շեշտեց, որ Սուրիոյ մէջ ահաբեկչութիւնը «թրջական արտադրութիւն է», յիշեցուց Արիսեան:

Ան ղիտել տուաւ, որ թրջական բռնագաւթի վարչակարգը ճնշումներու այլ միջոցներ եւս կը գործադրէ սուրիացի խաղաղ բնակիչներու դէմ: Մասնաւորապէս՝ Զահլէլ քաղաքին մէջ (Սուրիոյ հարաւարեւելքը, Թուրքիոյ սահմանէն ոչ հեռու - խմբ.) թրջամետ ուժեր կը խափանեն ջրամատակարարումը (հապուր եւ Ջաղ-Ջաղ գետերով, որոնք կը հոսին Թուրքիոյ հարաւարեւելքէն)՝ այսպիսով ջուրը որպէս զէնք օգտագործելով:

Սուրիոյ վերադարձը Արաբական Լիկա

Մայիս 2023-ին, 10-ամեայ դադարէ ետք, Սուրիա վերադարձաւ Արաբական Պետութիւններու Լիկա: Սուրիան Լիկայի հիմնադիր անդամ է եւ կը վերահաստատէ արաբական աշխարհի համագործակցութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը, ըսաւ դեսպանը:

ման անհրաժեշտութիւնը, ըսաւ դեսպանը: Վերջերս տեղի ունեցած Արաբական գագաթնաժողովը վերականգնեց այդ համագործակցութեան թափը, իսկ Սուրիոյ հարցով Արաբական կապերու կոմիտէի մասնակիցները, որոնք վերջերս հանդիպած Գահիրէ (Եգիպտոսի, Իրաքի, Սեւուական Արաբիոյ, Լիբանանի եւ Յորդանանի ԱԳ Նախարարները, որոնք հանդիպած են իրենց սուրիացի գործընկերոջ հետ), ընդգծած են Սուրիոյ մէջ ճգնաժամի աստիճանաբար կարգաւորման համար գործնական՝ արդիւնաւետ քայլերու ձեռնարկելու անհրաժեշտութիւնը: Ողջունելի է նաեւ Զայաստանի գործընկերութիւնը Արաբական Լիկայի հետ, ըսաւ Արիսեան:

Անկայտ է, բայց կ'արժէ կրկնել

Ինչ կը վերաբերի երկկողմ յարաբերութիւններուն, Զայաստան միշտ եղած է Սուրիոյ լաւագոյն բարեկամներէն մեկը, կ'ընդգծէ դեսպանը: Նոյնիսկ պատերազմին եւ երկու երկիրներու դիմագրաւած տարբեր ճգնաժամներուն ընթացքին, Սուրիա եւ Զայաստան իրար աջակցած են, ըլլայ երկկողմանի բազմաշերտ համագործակցութեամբ, թէ միջազգային հարթակներու վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆ...

Սկիզբ՝ էջ 8

կազմակերպութիւններուն ներդրումը գնահատելը միասնութեան, հպարտութեան, ինչպէս նաեւ հայ ազգի մաս ըլլալու զգացումը կ'ամրապնդեն:

Զայաստանի ու Սփիւռքի երիտասարդները հայոց պետականութեան, հայ մշակոյթի, քաղաքակրթութեան եւ ժառանգութեան պահպանման, զարգացման ու կերտման ընդհանուր պատասխանատուութիւնը կը կրեն հաւասարապէս: Զայոց նորագոյն պատմութեան, քաղաքակրթութեան նպաստելու կողքին համաշխարհային ու համամարդկային զարգացումներուն մասնակցելու համատեղ ջանքերը Նոյնքան էական են, որովհետեւ այդ ներդրումները ո'չ միայն կ'ամրապնդեն հայ երիտասարդներու հաւաքական ինքնութիւնը, այլ նաեւ կ'ապահովեն աշխարհատարած հայութեան եւ Զայաստանի անվտանգութիւնը:

Այս պատճառաւ Զայաստանի եւ Սփիւռքի հայ երիտասարդներուն խրախուսելը, փոխյարաբերութիւններու սերտացման եւ համագործակցութեան կայուն հարթակներ ու առիթներ տրամադրելը, ինքնավստահութեան ու ստեղծագործութեան մակարդակը բարձրացնելը, անկոտրում կամով տոգորելը, յուսալքութենէ հեռացնելը, համագաւթի զաղափարախօսութեան շուրջ համախմբելը հայրենի եւ սփիւռքեան համապատասխան մարմիններուն ու կառոյցներուն առաջնային պարտականութիւնն ու պարտաւորութիւնն են: Այս բոլորին մշակումը, որդեգրումը, գործադրումն ու արժեւորումը ի սկզբանէ թերի են ու Նոյնիսկ ապարդիւն, եթէ չկատարուին Զայաստանի եւ Սփիւռքի երիտասարդութեան խորքային ու լուրջ ներգրաւուածութեամբ, երիտասարդութեան հետ՝, երիտասարդութեան համար...:

«Դրօշակ» թիւ 8, 2023թ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Զայաստանի մէջ Սուրիոյ Դեսպանութիւնը Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան աջակցութեամբ մօտ 100 գիրք նուիրեց լսարանին:

Զայաստանի մէջ Սուրիոյ դեսպան Նորա Արիսեան կարեւոր հա-

մարեց նման լսարանի բացումը: Անոր համոզումով ասիկա գործակցութեան կարեւոր դրսեւորում է Սուրիոյ եւ Զայաստանի միջեւ:

«Մեր կարծիքով լսարանը պետք է դառնայ կարեւոր հարթակ կրթական, լեզուական, մշակութային յարաբերութիւնները ակտիւ զարգացնելու համար», յայտնեց դեսպանը:

Արիսեան ընդգծեց, որ լսարանը ոչ միայն ուսանողներու, այլեւ դասախօսներու համար անհրաժեշտ հարթակ պիտի ըլլայ:

«Այստեղ դասախօսութիւնները պիտի ընթանան ներգործուն ձեւաչափով: Տեղի պիտի ունենան նաեւ առցանց դասեր, որոնք պիտի մատուցեն Սուրիոյ մեր մասնագետները՝ լեզուաբանները, պատմաբանները, գրողները եւ այլն: Ասիկա կրնայ նաեւ հարթակ ըլլալ դասախօսներու համար՝ ակտիւ լաւ ճանչնալու Սուրիոյ մշակոյթը եւ պատմութիւնը»:

Զամալսարանապետ Յովհաննէս Յովհաննիսեան ղիտել տուաւ, որ ԵՊՀ-ի մէջ տարբեր ազգերու մշակոյթը, լեզուն եւ պատմութիւնը ներկայացնելու աւանդույթ կայ:

«Մենք կը սորվեցնենք երկրագիտութիւն, որպէսզի ուսանողը ակարտելէն ետք կարենայ ամբողջական պատկերացում կազմել տուեալ երկրի մշակոյթին մասին, եւ լսարաններու բացումը այդ շրջագիծին մէջ կը դիտարկենք», ըսաւ Յովհաննիսեան: Անոր խօսքով, լսարանի բացումը երկու երկիրներու դաւաճող բարեկամութեան վկայութիւնն է:

ԵՊՀ Արեւելագիտութեան ճիւղի պետ Ռուբէն Մելքոնեան յայտնեց, որ արեւելագիտութեան ճիւղի հիմնադրումէն ի վեր Սուրիա տէ ֆաքտօ ներկայ եղած է, ի դէմս նոր լսարանին Սուրիան այսուհետեւ տէ իւրէ ներկայ է արեւելագիտութեան համալսարան:

«Աշխարհի տարածքին հայ-սուրիական յարաբերութիւնները օրինակելի են, եւ այդ բարի կամեցողութիւնը կը սկսի ուսանողական նստարանէն: Վստահ եմ, որ այս լսարանէն դուրս պիտի գան նոր դեսպաններ, նոր մասնագետներ, որոնք պիտի շարունակեն ամրապնդել հայ-սուրիական յարաբերութիւնները», յայտնեց Մելքոնեան:

Լսարանը յառաջիկային կը համալրուի գերժամանակակից smartboard-ով, որ համալսարանին ներդրումը կը դառնայ սրահի աշխուժացման ընթացքին:

ԺԱՅՈՒՆԻ ԽՈՐՏԱԿԵԼՈՒ ԿԱՄՔՈՎ



Ս. Մահսերճեան

Ինչ որ տեղի ունեցաւ 2 Սեպտեմբերին, հայկական աշխարհի տարածքին՝ աննախընթաց չէր, սակայն ունեցաւ նոր եւ ուժգին հնչեղութիւն, դէպի պայքարի ծովափ նետեց նոր ալիքներ: Հայաստանի, Արցախի եւ աշխարհի տարածքին շուրջ 30 քաղաքներու մէջ, հայը ու-

Հայաստանի եւ Արտերկրի մէջ հանրահաւաքներուն եւ ցոյցերուն մասնակցող հայորդիները գործնապէս պատգամներ ուղղեցին Երեւանի իշխանաւորներուն, թուրք-ագերիին եւ բոլոր անոնց, որոնք կը փորձեն վերոյիջեալ շրջագիծէն դուրս տեսնել Արցախի հարցին լու-



քի կանգնեցաւ եւ անգամ մը եւս յայտարարեց, որ՝

Արցախը հայկական է եւ պիտի մնայ, չէ եղած ու պիտի չըլլայ Ատրպայեյեանի գերիշխանութեան տակ,

Արցախը առանձին չէ իր պայքարին մէջ, այլ ամբողջ հայութիւնը կը կանգնի անոր կողքին, նոր թափ ստացող պայքարը պիտի շարունակուի եւ նոր տարածքներ պիտի ստանայ,

Արցախը անբաժանելի մէկ մասնիկն է հայկական աշխարհին, իր պատմութեամբ եւ աշխարհագրութեամբ, իր մշակոյթով ու ժառանգութիւններով,

Արցախի տագնապը կարելի չէ դիտել սոսկ մարդկային ողբերգութեան մը պարունակին մէջ, որովհետեւ մինչեւ իսկ այդ դիտանկիւնէն, ողբերգութեանց արմատը է ու կը մնայ նոյնը՝ Արցախի ժողովուրդին ինքրորդման ԶԱՂԱԶԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ, ո՛վ որ այլ ըլլայ անտեսողը:

Արցախի ինքնորոշման՝ Ատրպայեյեանէն անկախ ըլլալուն փաստը, ապա, վախճանական հանգրուանին Հայաստանի վերամիանալու որոշումը անվիճելի են, անդառնալի: Այդպէ՛ս էր 32 տարի առաջ, երբ հաստատուեցաւ սեփական կամքի տնօրինման իրաւունքը, իբրեւ ուղղակի արդիւնք՝ 36 տարի առաջ ճամբայ ելած պայքարին՝ Արցախեան Շարժումին: ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԱՄՔՈՎ ԳԵՐԱԿԱՅԷ Է միջազգային նուրիականացած այս կամ այն օրէնքին, դրութեան:

Արցախը... Արցախը... Արցախը...

ծումը: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը անգամ մը եւս ամրագրող ցուցարարները խորքին մէջ քաղաքական աքթ մը իրականացուցին (կրկնեք. ո՛չ առաջինը, ոչ ալ վերջինը), արցախցիին «ագատ կամքի բռնութիւն» պարտադրել փորձողներուն հասկնելով, որ ո՛չ ոք իրաւունք ունի այք փակելու Ատրպայեյեանի եւ Թուրքիոյ երկի ու շարունակուող ՊԵՏԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐՈՒՄ վրայ, ոճիրներ՝ որոնք սկիզբ առած են ո՛չ միայն խորհրդային տարիներուն, այլ անկէ ալ առաջ:

Պատգամը նաեւ կ'ըսէ, որ ո՛չ ոք իրաւունք ունի իբրեւ հաւասարներ դիտելու հայկական եւ թուրք-ագերիական կողմերը եւ սպասելու, որ լուծումը ճամբայ ելլէ «փոխադարձ զիջումներով»: Հայկական կողմը պաշտօնապէս ներկայացնող անճարակները քանի՛-քանի անգամ իջեցուցին նշածողը, եւ սակայն, թըշնամիին սադրանքներն ու օր-աւուր կրկնուող ոճիրները կանգ չառին, սահման չեն ճանչնար (Արցախի հեղձամահութիւն, կրակոց, ռմբակոծում, առեւանգումներ...): Քաղաքական այս աքթը իրականացնողները յիշեցուցին, որ պատմական իրականութիւնները չեն կրնար փոխուիլ ու խեղաթիւրուիլ կամայական կերպով, համաձայն այս կամ այն շահերուն, կայ գլխագիր ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, կան ժողովուրդներու ճանչցուած եւ միջազգային ընտանիքին ամրագրուած իրաւունքներ, հետեւաբար, հայութեան գիշում թելադրողները պետք է վերադառնան... մանկապարտեզ ու նախակրթարան եւ սորվին այդ բոլորը, ջման բթամիտ-շահամոլի կօ-

շիկներուն մէջ:

Հայութիւնը կրկնելու գնով յայտարարեց. մենք զիջելու տեղ-բան չունինք, հայը թուրք-ագերիին առնելիք շա՛տ բան ունի, տալիք՝ ոչինչ: Ան, որ համակերպած է պարտութեան, նշածող իջեցնելու եւ «Արցախը տանք ու հանգիստ ապրինք» ընտրանքին՝ չի ներկայացնէր հայութեան, մինչեւ իսկ... իր հետեւորդներէն շատերուն կամքը: Իշխանաւորներուն սնանկ քարոզչութեան եւ կորուստէ-կորուստ տանող ուղիին հետեւողները շուտով պիտի գան այն գիտակցութեան, որ «քալողներու» խմբակը ինչպիսի՛ սուտերով ողորդած-մթագնած է իրենց ուղեղն ու հոգիները, աչքերը պիտի բանան եւ հասկնան, որ «նախկիններ» ու յանցանքները կապ չունին իշխանաւորներուն այն աճաբարարութիւններուն հետ, որովհետեւ «թաւիշ» ծախողները երեկ Արցախի քաղաքական իրաւունքներէն եւ անոնց միջազգային ճանաչում ապահովելու յանձնառութենէն կը քարոզէին, իսկ հիմա, Արցախի մեծ մասին գործնական կորուստէն եւ հազարաւոր զոհերէն ետք, կը յայտարարեն, թէ Արցախը Ատրպայեյեանի կը պատկանի, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս կը յոխորտան Պաքուն ու անոր ետին կանգնող Թուրքիան: Ազգադաւութեան վկայականը ունի յաւելուած մըն ալ՝ նոյնինքն Հայաստանէն հողեր նուեր տրուած են եւ անելին տալու խոստումներ ալ կը հնչեն «վասն խաղաղութեան», մինչդէռ թշնամիին կողմէ միայն մէկ յանկերգ կը հնչէ՝ «տուէ՛ք Չանգեզուրի միջանցքը, տուէ՛ք Սիւնիքն ու Տաւուշը, տուէ՛ք Սեւանն ու Երեւանը»: Ահա՛ թէ ինչպէ՛ս կ'արձագանգէ թշնամին՝ բթամիտներու «խաղաղութենէ այլ ընտրանք չունինք» մաշած ձայնապնակին:

Արցախի զօրակցութեան հաւաքները, ճիշդ է, Դաշնակցութեան նախածնութիւններն էին, սակայն Դաշնակցութիւնը հաւաքներէն առաջ ու անոնց ընթացքին կրկին ու կրկին հաստատեց, որ սա ՈՂՏ ԶԱՅՈՒՆԵՐԻ ՊԱՅՔՈՎ Է, ԶԱՅՈՒՆԵՐԻ ԿԵՏՈՒՄԸՆ Է: Եթէ կորստաբաշխ իշխանութեան դեմ դիմադրութիւն կայ, ամբողջ ազգը՝ Հայաստանէն Արցախ եւ Սփիւռք, դարձած է պայքարի մէկ փաղանգ:

44-օրեայ պատերազմէն ետք, քանի՛րորդ անգամ ըլլալով, դիմադրական շարժումը կ'աճեցան-


գէ. ամբողջ ազգն ու հայրենիքը, հայկական պետականութեան գոյութիւնը վտանգի տակ են, Արցախի մէջ նոր ցեղասպանութիւնը ճամբայ ելած է, հայաթափումը վաղահաս է: դիմադրական պայքարը չէ մղուած ու չի կրնար մղուիլ միայն մէկ-երկու կուսակցութեան եւ անոնց համակիրներուն բազուկներով: Յաջողութեան յոյս ունենալու համար, հրամայական է, որ նախածնողին շուրջ համախմբուին բոլոր՝ բոլորը:

«Մենք մեզ ո՛չ մէկից չենք գերադասում»-ին պետք է տալ այժմեական նոր մեկնաբանութիւն, որ յամենայնդէպս աննախընթաց երեւոյթ չէ: Հայկական յեղափոխական շարժումն ալ սկզբնաւորող եւ համախմբող ունեցաւ. մեկնակէտն ու վախճանակէտը Հայաստանի ու հայութեան ԶԱՂԱԶԱԿԱՆ իրաւունքներն էին: Սարդարապատն ալ ունեցաւ քաղաքական ու զինուորական առաջնորդողներ, սակայն ԱՄԲՈՂՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԵՐԳՐԱՈՒԵցաւ ճակատամարտին մէջ, միացուց բազուկները եւ անգամ մը եւս յաղթական դուրս եկաւ անհաւասար կռիւնէ: 1988-ին սկիզբ առած Արցախեան Շարժումն ալ ունէր անհատ առաջնորդներու խումբ մը, սակայն անոր յաջողութեան գրաւականը եղաւ ժողովուրդին՝ ամբողջ ժողովուրդին համախմբումը ղեկավարութեան շուրջ: Յաջորդող փուլերուն պատմութիւնը չէ հինգած...

Ժողովուրդը չի կրնար վերածուիլ կամագուրկ հետեւորդի եւ մնալ հայրենիքն ու պետութիւնը կորստեան տանողներու անհեռանկար, թշնամիին եւ գայն հովանաւորողներուն քմահաճոյքին խաղալիքի կացութեան մէջ:

2 Սեպտեմբերի շարժումը փաստեց, որ աշխարհացրի հայութիւնը ի՛նչ կ'ուզէ: Փաստեց՝ որ Արցախեան Շարժումինու ազատագրական պայքարի ոգին կանգուն է ամեն տեղ, պատրաստ է անգամ մը եւս հաւաքելու բազկի ու մտքի ուժ, խորտակելու համար Արցախի ու առհասարակ հայութեան իրաւունքներուն շուրջ բարձրացուող պարիսպները:

Եւ ի գուր չէր, որ շատեր 2 Սեպտեմբերին մէջ տեսան Արցախեան Շարժումը դարձեալ վեր-ա-կանգնելու աքթ մը: Չէ՞ որ ծովուն իրերայաջորդ ալիքները կարողութիւնը ունին մաշեցնելու եւ խորտակելու ծովափ ամենէն կարծր ժայռերն իսկ...



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական համայնքապատկան նախակրթական եւ երկրորդական վարժարանները 2023-2024 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունին.

- **-Երկու եւ անելի տարիներու վարչական հմտութիւն ունեցող տնօրէնի եւ տեսուչի,**
- **-Հմուտ եւ համալսարանական վկայագիր ունեցող ուսուցիչներու,**
- **-Տնտես հայրիկի եւ մայրիկի:**
- **Փափաքողները կրնան դիմել Կրթական Խորհուրդի գործավարութեան գրասենեակ:**

Թուրքիոյ նուրջ

ՍՈՉԻՄԵՑ ՓՈԽԹԻՆ ԷՐՏՈՂԱՆ ՀԱՆԴՊՈՒՄ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի Սոչիի նստավայրին մէջ Երկուշաբթի, 4 Սեպտեմբերին տեղի ունեցաւ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հետ լայն ձեւաչափով բանակցութիւններ:

Ռուսիոյ նախագահը հանդիպումին սկիզբը յայտնեց. «Շրջանին մէջ անվտանգութեան ապահովման առումով խօսելիք կայ: Ի հարկէ, մենք պիտի չանտեսենք ուրբանական ճգնաժամին առնչուած հարցերը... Մենք մտադիր ենք հացահատիկի գործարքին վերաբերեալ հարցեր քննարկել»:

Ան նաեւ յայտնեց, որ Թուրքիոյ մէջ «Աքքուլու» հիւլէական կայանի կառուցման նախագիծը կ'ընթանայ ըստ ծրագիրին, ուժանիւթի առաջին պլոքի գործարկումը տեղի պիտի ունենայ 2024 թուականին:

«Ինչպէս ըսի, մենք շատ վստահօրէն յառաջ կը շարժինք ուժանիւթի ոլորտին մէջ, համաձայնութիւններ ձեռք բերուած են հիմնական մատակարարներու, երկու կողմերու շարժիչներու միջեւ: Յոյսով եմ, որ այդպէս ալ պիտի ըլլայ: Մենք մօտիկ ապագային ատոր ականատեսը պիտի ըլլանք», աւելցուց Փութին:

Խօսելով Երկուշաբթի յարաբերութիւններուն մասին՝ ան նշեց, որ Մոսկուան եւ Անկարան «բոլորովին այլ շրջան» կ'ապրին: Փութին նշեց, որ ռուս-թրքական յարաբերութիւններուն մէջ կայունութիւն կայ, եւ անոնց ընթացքը կը պահպանուի տարբեր ոլորտներու մէջ զանոնք զարգացնելու միջոցով:



«Մենք շատ գոհ ենք, որ մեր արտաքին առեւտուրի ծաւալը ներկայիս կը կազմէ 62 միլիարտ տոլար, եւ մենք կը շարժինք դէպի մեր նպատակը՝ 100 միլիարտ տոլար», աւելցուց Էրտողան: Ան նաեւ նշեց «կազային հանգոյց» նախագիծի կարելիութիւնը:

«Մտադիր ենք առեւտուրի փոխանակումը կատարել տեղական դրամանիշներու օգտագործումով», նշեց ան:

Ռուսիոյ նախագահի բանբեր Տիմիթրի Փեսքով աւելի ուշ յայտարարեց, որ Փութին-Էրտողան ընդլայնուած կազմով բանակցութիւնները շատ կառուցողական էին: Անոր համաձայն, Սոչիի մէջ ընթացող բանակցութիւններու աւարտին որեւէ փաստաթուղթի ստորագրում չի նախատեսուիր: Ան բացատրեց, որ «այժմ» պետութիւններու ղեկավարները «կը հաղորդակցին դեմ առ դեմ, եւ անոնց խօսակցութիւնը իմաստալից պիտի ըլլայ»:

Փութին հանդիպումի աւարտին տրուած միացեալ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց. «Թուրքիոյ հետ ուժանիւթի ոլորտներուն մէջ յարաբերութիւններուն առումով յառաջդիմութիւն գոյութիւն ունի»: Ան աւելցուց. «Թուրքիոյ հետ փոխադարձ առեւտուրին մէջ մեր ազգային դրամանիշները կ'ուզենք օգտագործել»: Ան նաեւ ըսաւ, որ իր երկիրը աշխատանք կը տանի Թուրքիոյ ճամբով այլ երկիրներու կազմութիւններու ընդգծելով. «Ռուսիան դէպի Թուրքիա եւ անոր ճամբով ռուսական կազմութիւնները փափաքող երկիրներ կազմակարարող պիտի մնայ»:

«Թուրքիան մեզի համար կարեւոր գործընկեր է, եւ պիտի երաշխաւորենք հացահատիկի ներածումները, որոնք պետք է անոր հասնին», ըսաւ Փութին:

«Աշխատանք կը տարուի Ռուսիոյ եւ Թուրքիոյ մէջ ելեմտական հաստատութիւններուն միջեւ յարաբերութիւններ կառուցելու», յայտնեց Զրեմլինի ղեկավարը:

«Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները բոլոր ոլորտներուն մէջ յաջողութեամբ կը զարգանան, եւ հանդիպումը յաջող էր», ըսաւ Փութին:

«Սուրիոյ ապագան սուրիացիները իրենք անձամբ կը ճշդեն», յայտնեց ան, ինչպէս նաեւ նշեց. «Ուրբանիոյ հակայարձակումը ծախողեցաւ»:

«Ռուսական հացահատիկի եւ պարարտացուցիչներու փոխադրման դեմ պատժամիջոցներու ջնջումէն անմիջապէս ետք պիտի վերադառնանք հացահատիկի գործարքին, եւ մտադիր ենք հացահատիկն ու պարարտացուցիչները թրքական սեփական նաւահանգիստներու միջոցով փոխադրելու, եթէ ատիկա գիներու կայունութեան կը նպաստէ», ըսաւ Ռուսիոյ նախագահը:

Թուրքիոյ նախագահը Թուրքիոյ մէջ երկրաշարժի աղետին ընթացքին տրամադրած օժանդակութեան համար Ռուսիոյ շնորհակալութիւն յայտնելէ ետք իր կարգին յայտնեց, որ «Սեւ ծովու նախաձեռնութեան այլ ընտրանքները մնայուն լուծում չեն ապահովեր» աւելցնելով. «Կը կարծենք, որ Սեւ ծովու հացահատիկի նախաձեռնութիւնը պիտի շարունակուի»:

«Պիտի շարունակենք Ռուսիոյ հետ շրջանային բոլոր հարցերու լուծման շուրջ խորհրդակցի», ըսաւ Թուրքիոյ նախագահը:

Փաստաբանին Անկիւնը



ԻՄԱՆԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆՔ

Փաստաբան Մարիա Գաբրիէլեան

«Գանձասար»-ի այս սիւնակը կը միտի իրազեկ դարձնել հասարակութիւնը գինը հետաքրքրող սուրիական օրէնքներուն: Առ այդ, պատրաստակամ ենք ընդունելու օրէնքներու վերաբերող ձեռնարկներու հարցումները եւ թերթին ծամբով պատասխանելու անոնց: Ձեր հարցումները կրնաք ուղարկել հետեւեալ էլեկտրոնային հասցէին (E-mail) mariavarujan.kaprielian@hotmail.com: Մեր իրաւունքները պաշտպանուած են օրէնքներով՝ իմանալք եւ պաշտպանուիլք:

«Գանձասար»

ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹԻՒՆ Ա. (Վարձուորը կալուածէն դուրս բերելու մասին)

Վարձակալութեան վերաբերող օրէնքները քաղաքացիներու մեծ շերտի մը կը հետաքրքրեն: Այս շրջագիծէն ներս յեղաշրջում տեղի ունեցաւ 2001-ին, երբ լոյս տեսաւ թիւ 6 օրէնքը, որ վարձակալական պայմանագիրին մէջ հաստատեց հիմնարար այն սկզբունքը, որուն համաձայն պայմանագրերը կը տնօրինուին անոնց կողմերու դրսեւորած կամքին համապատասխան:

Վարձակալութեան վերաբերող հիմնական խնդիրներէն մէկը կը ծագի երբ կալուածի բաժնետոմսերէն միայն որոշակի թիւ ունեցող կալուածատերը ուզէ կալուածը վարձու տալ՝ առանց տեղեկալ ըլլալու, որ այս գործարքը կատարելու համար հարկաւոր է, որ կալուածի սեփականութեան 75%-ը ունենայ:

Կալուածատերերը յաճախ փաստաբաններու կը դիմեն տեղեկանալու համար, որ երկարաժաման ենթակայ կալուածներու պարագային արդէօք կա՞ն միջոցներ վարձուորը կալուածէն դուրս բերելու:

Այո՛, սուրիական վարձակալական 20 թուական օրէնքը (2015) կը ճշդէ շարք մը պարագաներ, որոնց առկայութեամբ կարելի է կալուածը վերադարձնել կալուածատիրոջ: Այդ պարագաներու գլխաւորները հետեւեալներն են.

- ա.-եթէ օրինական ճամբաներով (նամակատնային բացիկ կամ նօտարական ազդարարագիր) վարձուորը վարձքի վճարման մասին տեղեկացնելէ երեսուն օր ետք ան չվճարէ վարձքը:
 - բ.-եթէ վարձուորը վնաս հասցնէ կալուածին կամ զանիկա գործածութեան դէմ պայմանագրի պայմաններուն հակասող ընթացքով:
 - գ.-եթէ առանց սեփականատիրոջ արտօնութեան կալուածը ուրիշին վարձու տայ:
 - դ.-եթէ կալուածատերը այլ բնակարան չունենայ (բնակարաններու պարագային):
 - ե.-եթէ կալուածատերը (շէնքերուն պարագային) կամենայ փլել կալուածը եւ փոխարէնը նորը կառուցել:
 - զ.-եթէ վարձուորը (բնակարաններու պարագային) բնակելի այլ կալուածի տեր դառնայ:
 - է.-եթէ վարձուորը (բնակարաններու պարագային) ամբողջ տարի մը լքէ կալուածը:
- Բնականաբար իւրաքանչիւր պայման ունի իր ենթապայմանները, որոնք կը սերտուին պարագայ առ պարագայ:
- Յաջորդ թիւով պիտի ծանօթանանք կալուածներու վարձքերու ճշդման գործընթացին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրթասիրաց Ս. Զեմպերճեան Երկրորդ Վարժարանը 2023-2024 տարեշրջանին համար կարիք ունի՝

- Գիտութեան ուսուցիչի,
- Նախակրթարանի ուսուցիչի,
- Վարորդի,
- Տնտես Մայրիկի:

Դիմողները կրնան դպրոց ներկայանալ ամեն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ 2:00:

Պրիմալկե

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ



Մարուշ Երամյան

Կ'ըսուի թե՛ հորենացին իր Պատմությունը գրեր է ի՛ր օրերուն մասին, իսկ անմիջական անցեալի մասին գրածը ... լրացնելու արձանագրեր է:

Այդ լրացնելը անշուշտ մարդոց յիշողութեան մէջ մնացածներն են, որոնք եթէ հորենացին արձանագրած չըլլար, պիտի կորսուէին ընդմիշտ:

անցուդարձերուն եւ ապրողներուն հետ, օրինակ երբ մէկը իրենց քովէն անցնի, մազերը շոյելով կ'ըսէին՝ «Չգոյշ եղիր», կամ «Կամա՛ց, աստիճան կայ առջեւդ»: Այդ է պատճառը որ Ֆամաներուն տուններէն ներս կարգ ու կանոնը կը տիրապետեն, իսկ գրողներուն տուններուն մէջ միշտ ուրախ իրարանցում կայ:



Մեր մեծագոյն դիւցազնավէպը՝ Սասնայ Ծռերը, ճիշդ նոյն ճակատագիրը ունեցած է. ու եթէ չըլլային գայլն եւ անոր տարբերակները գրի առնողներ, այսօր մեր գրականութիւնը կարելի չէր լինէր որ անհատականութիւնը կորսնցնուցած պիտի ըլլար:

Հաւաքական յիշողութիւնը պահել-պահպանելը եական է իւրաքանչիւր ազգի համար:

Արժանիքի գրող Խուլիո Կորտասար իր Cronopios and Famas գիրքին մէջ ստեղծած է երեք տեսակ անհատականութիւն, որոնց կարելի է հանդիպիլ մեր ամէնօրեայ կեանքին մէջ՝ ֆամաները, գրողներին ու եսփերանձաները: Ֆամաները ճշգրիտ եւ մանկավարժ, լաւ կազմակերպուած, միշտ գիտեն ճիշդն ու սխալը: Անոնք անակնկալներ չեն սիրեր եւ կը նախընտրեն ամեն ինչ հսկել: Գրողներին, ընդհակառակը, ռոմանթիք երագողներ են, որոնք կրնան ամեն բանի մէջ բանաստեղծութիւն եւ ոգեւորութիւն գտնել: Եսփերանձաները այս երկուքին միջեւ բաներ են, անոնք միշտ յոյսով լեցուն են, բայց կը նախընտրեն փորձուած ճամբաներէն քալել:

«Ֆամաները իրենց յիշողութիւնները պահպանելու համար կը գմռնեն զանոնք, մազերով եւ նշաններով կը կապկպեն ու սեւ սաւանի մը մէջ փայթած, հիւրասենեակի պատին կը կռնակեն, վրան ալ յիշատակին մասին ցուցանակ մը դնելով, ինչպէս օրինակ «Պտոյտ Դէպի Կիլմէս» եւ այլն:

«Գրողներին, սակայն, այդ թափափած եւ ջերմ արարածները, թոյլ կու տային, որ յիշատակները թափառին տան մէջ, հաղորդունի

Այսօր քիչեր են անոնք, որոնք պատմութիւն կը գրեն, ժամանակակից պատմութիւն, թերեւս անոր համար, որ այսօրուան դէպքերուն մասին նոյն գիշերը նստիլ-գրելը կրնայ հաճեալ ըլլալ, կրնայ դիտանկիւնի պակաս ունենալ, որովհետեւ ի վերջոյ, եթէ պատմութիւնը պիտի ներկայացուի անաչառ կերպով, մանաւանդ՝ իր բոլոր կողմերով, պէտք է պատմագիրը եւ ունենայ կարողութիւնն ու կարելիութիւնը այդ բոլոր դիտանկիւններուն օգտագործումին:

Սակայն եղած են եւ կը շարունակեն ըլլալ անհատներ, որոնք կը հաւատան, որ հակառակ նորօրեայ գիտութեան, հակառակ համացանցային «ամեն բան մէկ կրճակով կըրնաս կարդալ եւ գիտնալ»-ու իրողութեան, կը հաւատան որ պէ՛տք է արձանագրել, մանաւանդ պէտք է դիտանկիւն ճշդել:

Բայց արդե՞ք այսօր գրելը պատմութիւն չի համարուիր, այլ պէտք է այդ գրութեան վրայէն ժամանակ անցնի, ճիշդն ու սխալը մաղուին եւ այլն:

Թերեւս ասիկա ճիշդ է երկիրներու եւ ազգերու պատմութեան պարագային, բայց ի՞նչ ընել, երբ գաղութի մը մասին է խօսքը, մեզի պէս բազմաթիւ հաւաքականութիւններու բարգաւաճումն ու ապա շիջումը տեսած սփիւռքի մը պատմութեան մասին է խօսքը: Օրինակներն ամենէն ցայտունը Հնդկաստանի եւ Լեհաստանի գաղութներն են, որոնք պատմութենէն հազիւ փշուրներ փրկուած են:

Այսօր, եթէ ուզենք, կրնանք առնել Մատթեոս Ուռհայեցիի գիրքը եւ գաղափար մը կազմել իր օրերու

պատմական դէպքերուն եւ իր այցելած երկիրներուն մասին:

Ուռհայեցին նկարագրեր է նաեւ ի՛ր ժամանակները «ժամանակագրութիւն» եռամսա աշխատութեան մէջ, որուն երրորդ բաժինով հեղինակը կը պատմէ իրեն ժամանակակից Բագրատունիներու մասին, թագաւորութեան կործանման, սելճուքներու արշաւանքներուն եւ նուաճումներուն, հայերու արտագաղթին, երկրէն դուրս հայկական իշխանութիւններ հիմնելու եւ օտար յարձակումներու դէմ անոնց պայքարին մասին:

Անշուշտ այլ պատմաբաններ եւս տարբեր ժամանակներու գրած են Բագրատունիներու մասին, ինչ որ առիթ կու տայ դէպքերը իրարու հետ բաղդատելով ճշդումներ եւ յանկումներ կատարելու:

Այսօր դժբախտաբար Բագրատունիներու կարեւորութեամբ եւ հրակայութեամբ թագաւորութիւն չունինք, ոչ իսկ «տուն» ունինք (բառը իր հին իմաստով), եւ ոչ ոքի միտքէն կ'անցնի «պատմութիւն» գրել:

Օրինակ՝ եգիպտահայ գաղութին կեանքը, իր սկիզբէն քանի մը գիրքերու մէջ ամփոփուած է, ինչպէս Արտաշէս Գ. Գարտաշէանի հրակայածաւալ եռահատոր աշխատասիրութիւնը՝ «Նիւթեր եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար», Աւետիս Եսփիւճեանի «Եգիպտահայ Մշակոյթի Պատմութիւն», Նուպար Գ. Տեր-Միքայէլեանի «Եգիպտահայ Գաղութը 16-18-րդ դարերուն» եւ այլն:

Բարեբախտաբար կը շարունակուի եգիպտահայ գաղութին մէջ պատմութեան հանդէպ նախանձախնդրութիւնը կարգ մը անհատներու միջոցով, թիւով երեք միայն, որոնք, ինչպէս ըսինք, խորունկ համոզումով լծուած են իրենց գաղութին պատմութիւնը Պատմութեան պահ տալու:

Եւ ինչպէս միշտ՝ այս երեք անհատներն ալ մասնագետ պատմաբաններ չեն, բայց «մասնագետ հայաէր»-ներ են:

Մէկը տոքթոր Սուրէն Պայրամեանն է (ատամնաբոյժ), որուն անունը այսօր կը նստի քանի մը գիրքերու կողքերուն, որպէս հեղինակ, ինչպէս «Հայ Մամուլն ու Գրատպութիւնը Եգիպտոսի Մէջ», «Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ», «Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի Մէջ»:

Երկրորդը Պերճ Թերզեանն է, որուն տասնեակ մը գիրքերն են յիշենք մէկ քանին միայն, ինչպէս «Հայկական Հրատարակչական Գործունեութիւնը Եգիպտոսի Մէջ Այսօր», «Գահիրէի Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններ

րու Կեդրոնը», «ԱՐԵԻ Արաբերէն Ամսօրեայ Յանդիւրածը», «ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը» եւ այլն:

Երրորդը Հայկ Աւագեանն է (մասնագիտութեամբ երաժիշտ՝ դաշնակահար-խմբավար), որ մոռցուած եւ անտեսուած արխիւներէ լոյսին կը բերէ ոչ միայն հայ գաղութին մէջ ապրած եւ գործած անհատներու կեանքն ու գործունեութիւնը, այլ մանաւանդ այն հայերուն, որոնք արաբերէն ծածկանուններով աշխատած են եգիպտական շրջանակներու մէջ՝ ֆիլմաշխարհի, երաժշտութեան թէ այլ: Իր հրատարակութիւնները, որոնք սկսած են 2016 թուականին որպէս եգիպտահայ «Զահակիր» երկշաբաթաթերթին յանդիւրածներ, այսօր անցած են յիսուսը եւ թափով կը շարունակուին:

Աւագեանի այս հրատարակութիւնները նուիրուած են այնպիսի անուններու, որոնք վստահաբար պիտի մոռցուէին, եթէ գիրքի մը մէջ պահ չդրուէին, ինչպէս օրինակ դաշնակահար-մանկավարժ Նուարդ Տամատեան, վաղամեռիկ Վանիա Էքսերճեան, Եգիպտոսէն Հայաստան ներգաղթած Գոհար Գասպարեան եւ իր «Եգիպտոսի Շրջանի Գործունեութիւնը», Զիրազ Ծածկանունով նշանաւոր երգիծանկարիչ, ֆրանսական թերթերուն մէջ հռչակ ստացած Էտմոն Զիրազեան «Զիրազի Եգիպտական Շրջանի Երգիծանկարներու Ընտրանի», տակաւին՝ այժմ Եգիպտոս վերադարձած Էտմոն Ժերար Համամեան արուեստագետին կեանքն ու անցած ուղին ԱՄՆ-ի, Ֆրանսայի եւ այլ երկիրներու բնակումն վրայ եւ այլն:

Այս բոլորը կը գրուին եւ օրինակներ կը յիշուին պարզապէս ցոյց տալու համար, թէ որքան կարեւոր է մերօրեայ պատմագրութիւնը գաղութներուն կեանքին համար:

Այս յիշումներէն կարգ մը գիրքեր որպէս աղբիւր ունեցած են, պահպանուած արխիւներուն կողքին, նաեւ անձնական գրութիւններ՝ նամակակազմի թէ յուշագրութիւն, որոնք ընդմէջէն խմբագիրը կրցած է բացայայտումներու հասկիլ:

Ահա թէ ինչո՞ւ ընտանիքներէն ներս պահուող թուղթի ամենափոքր կտորին անգամ, որ կրնայ պատմութեան պատահիկ մը պահած ըլլալ իր մէջ, պէտք է գուրգուրալ, ու եթէ պիտի ձերբագատիլ անկէ, պէտք է նախ ցոյց տալ մասնագետի մը, պահ տալ հոգացող մէկու մը, կամ յանձնել արխիւի մը:

Պահենք եւ արժեւորենք մեր պատմութիւնը, որ կրնայ տժգունիլ եւ անհետանալ ... Կը յիշէ՞ք Հընդկաստանն ու Լեհաստանը ...

www.kantsasar.com

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՐՈՒԹՅԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դոկտ. Գեորգ Յակոբճեան
*Դոկտոր, միջազգային օրենքի ու
մարդկային իրաւանց մասնագետ*

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ընդհանուր ծիրին մէջ միշտ չէ, որ երիտասարդական յարաբերութիւնները համապատասխան ու արժանի ուշադրութեան եւ վերլուծութեան կ'արժանանան: Սոյն յօդուածը լուսարձակի տակ կը փորձէ անել Հայաստանի եւ Սփիւռքի երիտասարդութեան փոխարաբերութիւններու ընդհանուր պարունակը, «context»-ը, ներկայ իրավիճակը, մարտահրաւերներն ու հնարաւորութիւնները՝ նպատակ ունենալով հայ ազգի այս երկու կենսական բաղադրիչներուն յարաբերութիւնները ամրապնդող առաջարկներ ու գաղափարներ տրամադրել: Յօդուածը կ'առաջնորդի այն տրամաբանութեամբ, որ հայաստանաբնակ ու սփիւռքաբնակ երիտասարդութեան միջեւ երբ ամրապնդուին փոխարաբերութիւններն ու խրախուսուի համագործակցութիւնը, կարելի է միասնական եւ հզօր հայկական ինքնութիւն կերտել, որ կը գերազանցէ աշխարհագրական ու աշխարհահայեացքային բոլոր սահմաններն ու մարտահրաւերները:



Կ'արժէ սկսիլ պատմական պարունակի «context»-ի վերլուծութեամբ, որովհետեւ անոր ճշգրիտ ըմբռնումը վճռորոշ դեր կը խաղայ Հայաստանի եւ Սփիւռքի հայ երիտասարդութեան յարաբերութիւններու «dynamics»-ը հասկնալու համար: Հայոց Յեղասպանութեան ազդեցութիւնը, 108 տարի տեք անոր հետեւանքները չվերացնելն ու արդարութիւնը չվերականգնելը, Հայաստանի խորհրդայնացման տարիներուն Հայաստանի ու անաւական Սփիւռքի մէջ ձեւաւորուած ընկերաբարոյական արժեքամակարգը, Հայաստանի վերանկախացումէն ի վեր պետականաշինութեան գործընթացը, ընկերատնտեսական ու քաղաքական պայմանները, արցախեան հիմնախնդիրը, յաղթութիւնն ու ցաւալի պարտութիւնը, Արցախի ներկայ բարդ ու տագնապալի վիճակը ուղղակիօրէն կ'ազդեն երիտասարդութեան ներաշխարհին ու պատկերացումներուն, ինչպէս նաեւ երիտասարդական յարաբերութիւններուն վրայ:

Աւելին, հայութեան աշխարհով մէկ ցրուած ու պանդուխտ ըլլալու իրականութիւնը, անաւական ու ժամանակակից Սփիւռքի համայնքներու ստեղծումը, սփիւռքեան համայնքներու յարափոփոխ պայմանները, անոնց (չ)կազմակերպութեան մակարդակը, երիտասարդութիւնը ներգրաւելու (չ)կարողականութիւնը, ժամանակին հետ քայլ պահելու դժուարութիւնները, արեւմտահայ ու արեւելահայ լեզուներու, ինչպէս նաեւ հայախօս ու օտարախօս հայ երիտասարդութեան ամկայութիւնը, ընկերային հաղորդակցութեան գերժամանակակից միջոցներն ու մանաւանդ ակամայ, բռնի կամ կամաւոր (աւելի բարենպաստ կեանք ունենալու համար) հայրենիքէն հեռացողի (կամ անոր գաւակը, թոռը, ծոռը ըլլալու) մտայնութիւնները, հողին վրայ անապահով ու անորոշ զգալու կամ հողի կարօտով ու անկէ հեռու ապրողներու բազմապիսի տագնապներն ու դժգոհութիւնները կը բարդացնեն ու կ'ազդեն երիտասարդական յարաբերութիւններուն վրայ: Իսկ երիտասարդական յարաբերութիւնները կը տարբերին այլ տարիքային խւերու յարաբերութիւններէն՝ հիմնականին մէջ յուսկանութեան, ըմբոստութեան, խանդավառութեան, փորձառութեան պակասի, արկածախնդրութեան ու նորարականութեան հակուած ըլլալու գործօններու վրայ:

Վերոնշեալ իրողութիւններու եւ գործօններու լրյսին տակ է, որ այսօր կը ձեւաւորուի Հայաստանի ու Սփիւռքի երիտասարդութեան ինքնութիւնը. տարբեր աշխարհայեացքներ, լեզուներ, մշակութային գործելակերպեր, անաւորյթներ, ինչպէս նաեւ տարբեր ու երբեմն հակասական հասարակական-քաղաքական միջավայրերու ազդեցութիւններ բնականաբար հայկական ինքնութեան բազմազան դրսեւորումներու արտայայտման կ'առաջնորդեն: Այս տատանումներն ու տարբերութիւնները ճանչնալն ու յարգելը եւ ըստ այնմ գործելը կենսական նշանակութիւն ունին Հայաստանի եւ Սփիւռքի երիտասարդութեան միջեւ իմաստակից կապեր հաստատելու համար: Այսինքն՝ ինքնութեան բազմազանութիւնը բաժանարար ու տկարացնող գործօն տեսնելու փոխարէն, հարստացնող ու զիրար ամբողջացնող ներուժի, համաշխարհային հզօր ու գործող ցանցի(երու) (networks) վերածելը մեկնակետը կը թուի ըլլալ առողջ, կայուն ու արդիւնաւետ երիտասարդական յարաբերութիւններու մշակման համար: Աւելի պարզ, երբ Հայաստանի ու Սփիւռքի երիտասարդութեան մասին քննարկում կը կատարուի, բնաւ մէկը միւսէն աւելի լաւ, մէկը միւսէն աւելի «աշխարհ տեսած»-ի, մէկը միւսէն աւելի առիթներ ունեցողի ու նաեւ մէկը միւսէն աւելի «հայ»-ի, հայրենասէրի կամ հայրենատէրի մրցակցութեան խնդիր պէտք չէ բարձրանայ: Սփիւռքի եւ Հայաստանի երիտասարդութիւնը համահասարակար-

թակի վրայ տարբեր ու բազմազան ազդեցութիւններու տակ ըլլալով հանդերձ՝ մէկ ընդհանուր ու ներառական (inclusive) հայկական ինքնութեան կրողն է, որ զիրար կ'ամբողջացնէ ու կը հզօրացնէ:

Առանց այս տարբերութիւններուն գծով փոխհասկացողութեան գարգացման՝ Սփիւռքի ու Հայաստանի երիտասարդութեան փոխադարձ ընկալումներն ու կարծրատիպերը դժուար թէ յաղթահարուին:

Կարծրատիպերու յաղթահարումը ինքնանպատակ չէ: Նախապէս մտածուած պատկերացումներու եւ կարծրատիպերու յաղթահարումը ճանապարհ կը հարթէ բաց երկխօսութեան, երկարատեւ համագործակցական նախագիծերու եւ ընդհանուր նպատակներու ու ձգտումներու իրագործման համար:

Ահա թէ ինչո՞ւ նախ եւ առաջ Հայաստանի եւ Սփիւռքի հայ երիտասարդները պէտք է զիրար ճանչնան...: Բարձր է թիւը այն սփիւռքահայ երիտասարդներուն, որոնք այս կամ այն պատճառով կամ ծրագիրով Հայաստան կ'այցելեն՝ առանց կայուն ու մնայուն յարաբերութիւններ ստեղծելու հայաստանաբնակ իրենց հայրենակիցներուն հետ...: Գրեթէ նոյնն է պարագան, երբ հայաստանաբնակ երիտասարդներ ուսանելու եւ կամ այլ պատճառներու բերումով ժամանակաւորապէս «սփիւռքեան» քաղաքներու մէջ կը յայտնուին, ուր աշխոյժ հայկական համայնքներ կը գործեն, սակայն ճի՞գ չեն թափեր տեղւոյն հայութեան ծանօթանալու, մտերմանալու եւ համայնքային կեանքին մասնակցելու համար:

Նկատի առած երկու հատուածներուն միջեւ փոխադարձ ճանաչողութեան մակարդակի բարելաւման հրամայականը՝ Հայաստանի մէջ կազմակերպութեան երիտասարդական բոլոր ծրագիրները (համահայկական, մարզական, կրթական, սկսնական, քաղաքական, կամաւորական եւ այլն) պէտք է յստակօրէն նպատակադրեն ու յաւելեալ ջանքեր գործադրեն Հայաստան-Սփիւռք երիտասարդական կայուն յարաբերութիւններու ստեղծման համար: Իսկ Սփիւռքի մէջ ապրող երիտասարդներն ու երիտասարդական կառույցները ճի՞գ պէտք չէ խնայեն Հայաստանէն ժամանած երիտասարդները ներգրաւելու համար:

Իրարու ջանքերն ու ձեռքբերումները գնահատելու եւ անոնց վրայ նոր ձեռքբերումներ կառուցելու հմտութիւններուն պէտք է տիրապետել ու հնարաւոր բոլոր արդի միջոցները օգտագործել, ինչպէս, օրինակ՝ առցանց հարթակներ, գործընկերութիւններ, նորարական ծրագիրներու ֆինանսաւորում, վարժողական ծրագիրներ եւ այլն:

Այս ծիրին մէջ շատ կարեւոր է, որ Հայաստան-Սփիւռք երիտասարդական յարաբերութիւնները հնարաւորինս քիչ ազդուին գնայուն իշխանութիւններու կամ այլ դերակատարներու քաղաքականութիւններով կամ ճղդճիմ առաջնահերթութիւններով: Հայաստան-Սփիւռք փոխվստահութեան անկման ու յարաբերութիւններու կտրուկ վատթարացման այս օրերուն հրամայական է, որ գոնէ երիտասարդական առողջ յարաբերութիւններուն տրուի հաստատութեան (institutional) բնոյթ, ուր գործող իշխանութիւնները քիչ ազդեցութիւն ունենան այդ յարաբերութիւններու առողջ ընթացքը կասեցնելու վրայ: Այսինքն՝ անկախ, թէ Հայաստանի գործող իշխանութիւններուն ու Սփիւռքի պաշտօնական կառույցներուն յարաբերութիւնները ինչ մակարդակի վրայ են, Հայաստանի ու Սփիւռքի քաղաքական միտքի ներկայացուցիչները պէտք է այնպիսի հասունութիւն ու լայնախոհութիւն ցուցաբերեն, որ ժամանակաւոր յարաբերութիւններու վատթարացումն ու փոխվստահութեան անկումը երկարաժամկետ ու բացասական հետեւանքներ չունենան երիտասարդական յարաբերութիւններուն վրայ:

Այստեղ պէտք չէ ուրանալ, որ ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Սփիւռքի երիտասարդները Հայաստանի մէջ ընթացող քաղաքական հարցերու եւ գարգացումներու գծով յաճախ տարբեր փորձառութիւններ եւ տեսակետներ ունին: Ընկերային հաղորդակցութեան միջոցներուն վրայ հետեւեալ երեւոյթները համատարած են՝ կրաւորական, գարմացնող լռութիւն, «քաղաքականութեամբ չզբաղելու» ջրմեղանք, յուսալքութիւն ու երբեմն հայիոյախառն, զիրար չհանդուրժող, զիրար այպանող ու վանողական լեզուակրիւներ: Հայաստանի ու Սփիւռքի երիտասարդութեան միջեւ կառուցողական բանավեճի մասնակցելու, անկաշկանդ հարթակ տրամադրելու, փաստարկ ու հակափաստարկ ներկայացնելու, զիրար լսելու եւ հասկնալու մշակոյթ չէ ձեւաւորուած: Անկախ մասնագիտութենէ կամ հետաքրքրութիւններէ՝ ազգին ու պետականութեան վերաբերող համահայկական գերիշնորհներուն նկատմամբ պատասխանատուութիւն ցուցաբերելը, քաղաքական գարգացումներուն վերաբերեալ յարգալից քննարկումներու մասնակցիլը, կառուցողական բանավեճերու հարթակներ ստեղծելը եւ որոշումներու կայացման գործընթացներուն երիտասարդներուն մասնակցութիւնը խրախուսելը ընդհանուր տարածք կրնան ստեղծել քաղաքական մտահոգութիւններու լուծման եւ հասարակ յայտարարի հասնելու համար:

Քաղաքական գործընթացներէն վեր ու անդին՝ պետականաշինութիւնը, ազգային անվտանգութիւնը (ներառեալ Արցախի ու արցախահայութեան), կայուն գարգացումը, արդարութեան վերականգնումը, մարդու իրաւունքները եւ ընկերային արդարութիւնը կ'ոգեշնչեն հայ երիտասարդները, որպէսզի անկախ աշխարհագրական հեռաւորութիւններուն ու բազմապիսի տարբերութիւններուն՝ միասին գործեն: Համագործակցութեան համար այնպիսի ոլորտներ կան, ինչպիսիք են ձեռնարկութիւնը, արհեստագիտութիւնը, արուեստը եւ ակադեմիան, որոնց միջոցաւ Սփիւռքի եւ Հայաստանի երիտասարդութիւնը կրնայ իր հաւաքական ուժերը մէկտեղել եւ դրական փոփոխութիւններ յառաջացնել: Փոխադարձ յաջողութիւնները նշելը, մշակութային փոխանակումը խթանելը եւ երկու խումբերուն անհատներուն եւ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԻՍ «ԱՆԵԾՔԸ»



Կարո Վ. Մանճիկեան

Ուսմանս միջնակարգի տարիները անցուցի Համագրայի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, (որպէս գիշերօթիկ), աշակերտելով հայերէն լեզուի դասատուներ՝ Յարութիւն Զիւրքճեանի, Գառնիկ Բանեանի, ապա հայ գրականութեան ուսուցիչ ունեցանք Գրիգոր Շահինեանը. սակայն ճակատագիրը, թէ Լիբանանի քաղաքացիական պատերազմը ստիպեց, որ լքեմ Պէյրուսի ճեմարանը ու շարունակեմ ուսումս Հայէպի Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանին մէջ, որուն երկրորդական բաժինը աւարտեցի:

Հայէպի ճեմարանի մեր հայ գրականութեան ուսուցիչն էր պրն. Մկրտիչ Մկրտիչեան:

Գիտէիք, որ ան հեղինակն էր Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդի հրատարակած հայերէնի քերականութեան շարքին:

Ան ժամանակ մը վարած էր Ազգ. Հայկազեան Նախակրթարանի հայերէնի դասատուի պաշտօնը:

Իմացած էիք նաեւ որ իր ուսումը առած էր Երուսաղէմի Պատրիարքարանի ժառանգաւորացին մէջ ու աշակերտած մեծանուն գրագետ-գրաքննադատ Յակոբ Օշականին:

Ու ահա՛, այդ կարճահասակ ու սաստիկ սասուցին մեր հայ գրականութեան դասատուն էր:

Դասագիրք չունէիք: Յառաջիկայ տարին ունեցանք խմորատիպ դասագիրքեր:

Պրն. Մկրտիչեան իւրաքանչիւր դաս արտագրել կու տար մեզի:

Մեր դասապահերէն մին քանակուած է յիշողութեանս մէջ: Դասը յատկացուած էր մեծ ուսուցիչին՝ Յակոբ Օշականին:

Ան այսպէս պատմեց.

–Մեր գրական վերլուծումին դասը կը վերաբերէր Ամենայն Հայոց Բանաստեղծ Յ. Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը» բանաստեղծութեան:

Ան (Օշականը) վերլուծելով բանաստեղծութիւնը, անոր իրերայաջորդ տուներն ու տողերը, «ջարդեց ու փշրեց» բանաստեղծութիւնն ու հեղինակը, այնքան խորացաւ որ մենք սկսանք գայրոյթի արտայայտութիւններ ունենալ:

Սակայն երբ հասաւ վերջին տողին մօտ, ան կանգ առաւ ու ընդգծելով ըսաւ.

«Հոս պահուած է Ամենայն Հայոց Բանաստեղծը». ու այդ տողով ան մեզի համար վերականգնեց վիթխարի Յ. Թումանեանը:

Անջնջելիօրէն կը յիշեմ այն դասապահը, երբ հարցաքննուող աշակերտը նուաստս էր: Ու դասը կը վերաբերէր իմ նախասիրած գրագետ Արամ Հայկազին: Ես պիտի ներկայացնէի անոր գործերը՝ երկերը:

Ժամանակագրական կարգով, հակիրճ ծանօթութիւններով թուեցի գրագետին գործերը ու աւարտեցի մատնանշելով, որ անոր վերջին գործը «Երջանկութիւն» խորագիրը ունէր, որուն յառաջաբանին մէջ ան մօտաւորապէս կ'ըսէր.

«Երբ գիրքին վերջին տողերը կը գրէի, նկատեցի որ սովորականէն աւելի տխուր էին քան նախորդները, ուստի խորագիրը գրեցի Երջանկութիւն»:

Այդ գիրքը ինծի նուէր էր Ա. Հայկազին կողմէ, մեծ մօրս միջոցաւ Ամերիկայէն առաքուած (առանց գին ճանչցած ըլլալու):

Պրն. Մկրտիչեանին աչքերը տարբեր փայլք մը ստացան: Մեզի արտագրել տուածին մէջ չկար «Երջանկութիւն» հատորին մասին, ու ինք ծանօթ չէր անոր պարունակութեան: Ինձմէ պահանջեց որ աւելին թուեմ ու պատմեմ «Երջանկութեան» մասին:

Երբ աւարտեցի, վաստկեցայ անոր «ապրիս»-ը, եւ ան յայտնեց որ իրեն ծանօթ չէր այդ երկը:

Իւրայատուկ էին մեր շարադրութեան պահերը:

Կարգով մեզի կարդալ կու տար մեր գրու-

թիւները, սրբագրելով, մատնանշումներ կատարելով, թելադրելով: Մէկ խօսքով՝ մեզի գրել կը սորվեցնէր:

Յաճախ նաեւ կը նկատէր.

«Մաշած պատկեր», «անտեղի կրկնութիւն», «Նորութիւն մը չես ըսած», «Ժամանակի ու տեղի պայմանները չես յարգած», «աւելորդ ածականները վերցուր»...:

Իսկ մեր շարադրութեան տետրակներու գրութիւններուն յաջորդ էջերը կարմիրով ներ-



կուած կ'ըլլային, ուր ան արձանագրած կ'ըլլար իր նկատողութիւնները, վերլուծումները: Ինչպէս ըսի՝ մեզ կը մղէր գրել սորվելու:

Ու հասաւ այն օրը, երբ մենք այլեւս աւարտական՝ 12-րդ կարգի աշակերտներ, շուտով հրաժեշտ պիտի տայինք ճեմարանին:

Հայ գրականութեան վերջին դասապահն էր. շարադրութեան պահն էր, իսկ մեր շարադրութեան նիւթը՝ «Վերջին շարադրութիւնս» էր:

Ինծի համար պահը յուզիչ էր ու ներսս խռով կար: Այլ գրականութեան, հայ գրականութեան դասապահեր պիտի չունենայինք:

Բաւական դժուարութիւն ունեցայ գրութիւնս աւարտելու համար: Իմ գրածս ես իսկ դժգոհ էի:

Առաւօտուն, սովորական ժամէն կանուխ գացի ճեմարան, որ շատ ալ հեռու էր մեր տունէն:

Դասընկերս՝ Վարուժ Դազարեանը, կանխած էր գիս, թէեւ իրենց տունը բաւական հեռու էր ճեմարանէն:

Ջոյային վիճակ մը ունէր Վարուժը: Ու իմ հարցադրումին թէ ինչ ունի պատասխանեց.

–Օրթա՛խ (գործընկեր), առտու շատ կանուխ արթնցայ, նախաճաշ ընելէն ետք գլուխս գաւաթ մը քաղցր գինի «քաշեցի». արեւածագին գացի հանրային պարտեզ (Հայէպի կեդրոնական հանրային պարտեզը՝ «մաշթալ»-ը) ու հոն գրեցի շարադրութիւնս:

Ինչպէս, որ կարդայ բարձրաձայն, բայց մերժեց, անդրդուելի մնաց. արդէն դասարան մուտքի գանգն ալ ինչեց:

Մտանք դասարան:

Պրն. Մկրտիչեան փափաքեցաւ, որ այդ՝ վերջին դասապահուն, քանի մը աշակերտ կամաւորաբար ընթերցեն իրենց գրած շարադրութիւնները, հակառակ ընկալեալ սովորութեան:

Դասընկերներս կ'ուշանային: Գուցէ անոնց համարձակութիւնը բաւարարէր: Գուցէ եւ գրած էին, միայն գրած ըլլալու համար:

Ես կը փափաքէի կարդալ, սակայն ինչպէս վերը ըսի, գրածս գոհ չէի: Գուցէ կրնայի աւելի

լաւ գրել:

Չգացի, որ ուսուցիչս մեր ուշացումը նկատելով նեղացաւ: Ինքզինքն ըսի. «տղայ՛, եկո՛ւր ուրախացո՛ւր ուսուցիչդ, լաւ թէ վատ, ե՛լ ու կարդա՛»: Ու մատս բարձրացուցի ու պատրաստակամութիւն յայտնեցի կարդալու, որ այս վերջին պահը ուրախութեամբ աւարտի... «պայմանաւ»...

– Ի՞նչ է պայմանդ, Կարո՛:

– Պարոն, ես գրածս շատ չեմ հաւնիր, գոհացուցիչ չէ: Սակայն կը խնդրեմ, որ Վարուժին գրածը կարդալ տաք, ինձմէ ետք ան ալ թող կարդայ:

Պրն. Մկրտիչեան անծանօթ չէր անշուշտ Վարուժին գրութիւններուն, կարողութեան, ոճին... ու ինծի դառնալով կէս բարկացած ու կէս գոհունակ ըսաւ.

– Ընդունեցի պայմանդ: Վարուժն ալ իր կարգին պայման դրաւ.

– Պարո՛ն, ինձմէ ետք Անդոն ալ թող կարդայ:

Անդոյին (Անդրանիկ Չարշաֆճեան) գրած շարադրութիւնները իրերայաջորդ պատմութեանը ներու շարք մըն էին, Յակոբ Օշականի հետեւողութեամբ... Պրն. Մկրտիչեան քաջածանօթ էր Անդոյին գրութիւններուն:

Լրջութիւն կեղծելով պրն. Մկրտիչեան ըսաւ.

– Շատ եղան ձեր պայմանները, սակայն ընդունեցի: Կարդա՛, Կարո՛:

Ի դեպ, միջանկեալ նշեմ, որ այժմ ամերիկաբնակ Անդոյին որդին՝ Շանթը, թողուց Ամերիկան, գնաց Արցախ, հոն պսակուեցաւ ու ունեցաւ առջինեկ գաւակը ու արցախցիներուն տուները բարեգործութեամբ օժտեց արեւային ճառագայթներով ջուր տաքցնող սարքերով: Այժմ ան այնտեղ է եւ կը «վայելէ» Արցախի շրջափակման ազերիական «պարգելը», արցախցի մեր եղբայրներուն հետ:

(Այս մանրամասնութիւններուն իրազեկեցած եմ դիմատետրի էջերէն):

Ու կարդացի համեստ շարադրութիւնս ու տեղս նստայ:

Պրն. Մկրտիչ համարեա՛ գոհ էր:

Վարուժը սկսաւ կարդալ: Գրածը արձակ բանաստեղծութիւն մըն էր:

Պրն. Մկրտիչեան կատարեց գրութեան վերլուծումը: Ապա լուրջ դժմով, որուն ետին թաքնուած էր գոհունակութիւնը, մեզի ըսաւ.

– Վարուժ, գրածդ արձակ բանաստեղծութիւն մըն է. այս գրական սեռը մեր գրականութեան մէջ քիչ տեղ գտած է. սակաւ են անոնք: Սակայն, Վարուժ, դուն այս արձակ բանաստեղծութեամբ արդէն հայ գրականութեան դրան շեմէն ներս մտար, ապրի՛ս:

Պրն. Մկրտիչեան անտեղեակ էր Վարուժին առտու-կանուխ ըմպած քաղցր գինիի բաժակէն: Անդոն ալ կարդաց. մենք շատ բան չէինք կըր-

նար հասկնալ գրուածէն, որովհետեւ ծանօթ չէինք իր նախորդ գրածներուն, այս շարադրութիւնը անոնց շարունակութիւնն էր:

Դասապահը կը մօտենար իր աւարտին:

Տարիքը յառաջացած մեր ուսուցիչին՝ պրն. Մկրտիչեանին աչքերուն մէջ կը ցոլար ներքին յուզումը:

Ձեռքերը մեղմօրէն կը դողային: Ու աչքերը համարեա՛ թաց էին: Հոն ան քողարկած կը պահէր իր ուրախութիւնը: Մեր սասուցի խորխտ ուսուցիչը իր խօսքը մեզի՛ երեքս ուղղելով ըսաւ.

– Տղա՛ք, ձեզի մաղթանք մը պիտի ընեմ. ձեր մատները թող որ կտորին, եթէ գրիչը վար դնէք:

Յանկարծ գանգը ինչեց. ու մենք չտեսանք թէ պրն. Մկրտիչեանին աչքերուն մէջ շատցած էին ըմբոստացող արցունքի կաթիլները ու շատնալով վար կը գլորէին իր արդէն կնճռուած այտերէն:

Վերջին հայ գրականութեան պահը:

Վերջին շարադրութիւնը:

Վերջին դասապահը պրն. Մկրտիչեանին հետ: (Ան մեկնեցաւ ԱՄՆ միանալու իր գաւակներուն):

Ու մենք ստացանք մեր սիրելի ուսուցիչին մաղթանքը, թէկուզ փարատքսային բառերով ու ոճով: Սրտաբուխ ու անկեղծ իր վերջին մաղթանքը մեզի ուղղուած:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Այս շաբաթ դիրաբեկ դարձած էք ու կ'ազդուիք ձեր շուրջը լողող տեղի ունեցող վեճերին: Սառնասրտութեամբ փորձեցէ՛ք լուծել հարցերը:
- 

ՁՈՒԼ
Ձեր աշխատանքը բարելավելու կարելու ծրագրերը կեանքի պետք է կոչեք, այլապես անոնք կը մնան թուղթի վրայ արձանագրուած երազներ:
- 

ԵՐԿՈՐԹԵԱԿ
Յին օրերու ձախողութիւնները թող չընկճեն ձեզ: Յառաջ նայեցէ՛ք, նոր թափով փորձեցէ՛ք գործի լծուիլ ու յաջողութիւնը ձեր ընկերակիցը պիտի ըլլայ:
- 

ԽԵՅՁԵՏԻՆ
Միտք մէջ դրական յառաջիադացք մը պիտի ունենաք, ու ձեր թաքուն սիրելին պիտի խոստովանի իր սերը ձեզի հանդէպ:
- 

ԱՌԻՃ
Երկրի տնտեսական ծանր վիճակը ընկճած է ձեզ: Այս շաբաթ նոր ծրագրի մը իրականացումը լաւ եկամուտ պիտի ապահովէ ձեզի: Գործի լծուեցէ՛ք:
- 

ԿՈՅՍ
Ամառնային արձակուրդը վայելեցէ՛ք, վերամուտը հասաւ արդէն, հաւանաբար քանի մը օր վերջ առիթ չունենաք ճամբորդութիւններու կամ պտոյտի:
- 

ԿՇԻՈՔ
Յաճախ ձեր շրջապատին հասնելով դուք ձեզ կը մոռնաք, կ'անտեսէք ձեր առողջական հարցերը: Խնամեցէ՛ք դուք ձեզի, հոգ տարէ՛ք ձեր առողջութեան:
- 

ԿԱՐԻՃ
Երբեմն ձախողութիւնները պատճառ կը դառնան, որ կորսնցնէք ձեր ինքնավստահութիւնը եւ որոշ տըրտմութիւն ապրիք: Նոր քայլ մը կարելու պիտի ըլլայ այս վիճակը փոխելու:
- 

ԱՂԵՂՍԱՌ
Շաբթուան սկիզբը հեռուոր բարեկամներ պիտի այցելեն ձեզի ու ջերմ պահեր ստեղծեն: Արձակուրդի օրերուն ժամանակ տրամադրեցէ՛ք անոնց:
- 

ԱՅՏԵՂՋԻՐ
Որքան ալ լաւ եկամուտ ունենաք, տնտեսող եղէ՛ք, որպէսզի նեղ կացութեան չմատնուիք:
- 

ՋՐՅՈՍ
Նոր պաշտօն մը պիտի առաջարկուի ձեզի, թէեւ պիտի տատամփիք ստանձնելու գայն, սակայն դրական պատասխան տալու պարագային եզակի տնօրէն մը պիտի ըլլաք:
- 

ՁՈՒԿ
Նորարարութիւնը ձեր աշխատանքի մեկնակետը դարձուցէ՛ք, որպէսզի յաջողութիւն գտնէք: Անաղապանը յաճախ ներկայ պահանջներուն համապատասխան չ'ընթանար:



ՖԻԼՄԱԿԵԼՈՒՄ

ՍՈՒՐԻՎՅԻ ԲԵՄԱԴՐԻՉ ՆԵՃՏԵԹ ԱՆՉՈՒՐԻ «ԿՈՏՐՈՒՄՈՒ ԽԱՉԸ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ՆՈՐ ՖԻԼՄԸ ՅՈՒՅԱԴՐՈՒԵՑԱՒ

Անգուր Ֆիլմարտադրութեան Ընկերութիւնը Դամասկոսի Ասատ Մշակոյթի եւ Արուեստի տան «Տրամա» պատկերասրահին մէջ «Կոտրուած Խաչ»-ը խորագիրով Նոր Ֆիլմին Սուրիոյ մէջ առաջին ցուցադրութիւնը կատարեց:



Ֆիլմին հեղինակն է Մահմուտ Ապտուլ Զարիմ, բեմադրիչը՝ Եազան Նեճտեթ Անգուր, իսկ վաւերագրողը՝ դոկտ. Մուհամետ Զամալ ալ-ճաֆա: Ընդհանուր պատասխանատունն է բեմադրութեան վերահիւսկողը հանրածանօթ բեմադրիչ, արուեստագետ Նեճտեթ Անգուրն է:

ՍԱՆԱ-ի հետ գրոյցի ընթացքին Նեճտեթ Անգուր կը շեշտէ, որ չկայ անելի ողբերգական բան քան մարդ անհատը իր հողէն, միջավայրէն, յիշողութենէն ու հայրենիքէն պոկելը, ինչ որ պատահեցաւ այդ տարածքի 50 հազար քրիստոնէական երուս, որոնք սիրով ու խաղաղ գոյակցութեամբ կ'ապրէին սուրիական ընկերութեան բոլոր բաղադրիչներուն հետ:

Ապա անելցնելով կ'ըստ. «Ֆիլմը սկիզբ մըն է բոլոր իրողութիւնները, առանց խտրութեան, երեսան հանելու եւ քողագերծելու արեւմտեան ապատեղեկատուութիւնը սուրիական ողբերգութեան գծով: Ողբերգութիւն մը, որ երկիր քանդեց եւ ողջ ժողովուրդ մը գաղթի, տնտեսական տագնապի մէջ խրեց: Կը հաւատամ որ այս սկիզբը սուրիական պատկերը պիտի յստակացնէ ու նպաստէ Սուրիոյ միասնականութեան եւ տարածքային ամբողջականութեան վերականգնումին»:

ՆՈՐԱԶԵՆՈՒԹԻՒՆ

ՈՃԱԲԱՆԸ ՅԱՅՏՆԱԾ Է 2023-Ի ԱՇՆԱՆ ՏԻՐԱԿԱՆ ԳՈՅՆԸ



Ռուս ոճաբան Ալեքսանտր Ռոքով յայտնած է, որ 2023-ի աշնան տիրող հիմնական գոյնը կարմիրն է: Այս տեղեկութիւնը գրած է իր անձնական Telegram-ի ալիքին վրայ:



«Աշունը եկած է: Ինչպէս կանանց, նոյնպէս ալ տղամարդոց կերպարներուն մէջ կարմիրը նոյնքան կիրարկուող գոյն պիտի դառնայ», գրած է փորձագետը: Ռոքով հրապարակած է աստղերու եւ մոտելներու լուսանկարներու ընտրանի մը՝ կարմիր հագուկապով:

Խոհագիր

ԱՐՄԱԻՈՎ ԳՆԴԱԿՆԵՐ (Առողջապահական քաղցրեղեն)

- Բաղադրութիւն**
- 1/4 քիլօ արմաւ (կորիզը հանուած)
 - 250 կրամ ճերմակ շուշմայ
 - 250 կրամ գետնանուշ (պիստակ)
 - 250 կրամ հալած տուրմ
 - 4 դգալ մեղր



Պատրաստութիւն

Կրակի վրայ, տապակի մը մէջ խարկել գետնանուշը, ապա շուշման ու մէկ կողմ դնել:

Հարիչին մէջ դնել կորիզը հանուած արմաւը եւ կամաց-կամաց հարել, ապա հանգրուանաբար անելցնել խարկուած գետնանուշն ու շուշմային կէսը, քիչ մը հարել ետք անելցնել մեղրը ու հարել մինչեւ որ միատարր գանգուած մը ըլլայ:

Ապա գանգուածը շաղել եւ հաւասար գնդիկներու վերածել, իւրաքանչիւր թաթիսել շուշմային, յետոյ իւրաքանչիւր գնդակին մէջտեղը փոսիկ մը յառաջացնել ու մէջը լեցնել հալած տուրմը: Պահել սառնարանը:

Արմաւով գնդակները պատրաստ են, կրնաք գանոնք գարդարել մանրուած ընկոյզով կամ նուշով:

Բարի ախորժակ:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Անցեալ շաբթուան ընթացքին Սուրիոյ Մարզական Գերագոյն Կոմիտէն նշանակեց Զալէայի Ահլի, ճալաա եւ Զուրիէ ակումբներու վարչութիւնները: Ահլի ակումբի նախագահութիւնը վստահուեցաւ Ռուսէյն Մարթինիին, ճալաաի վարչութեան ատենապետ դարձաւ Պաշշար Ազարը, իսկ Զուրիէի ատենապետ՝ Անթուան Շարքին:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՃԵՐՈՒԵՑԱՆ ԶԵՄՓԻՆՆԵՐ ԼԻԿԻ ԽԱՐԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ



Հինգշաբթի օր Մոնաքոյի մէջ տեղի ունեցաւ ֆուտպոլի եւրոպական Չեմպիոնզ Լիկի խմբային փուլի մրցաշարի վիճակագրումը: Մասնակցութեան իրաւունք ունեցող 32 խումբերը բաժնուեցան ութ խմբակներու: Վիճակագրումին արդիւնքը հետեւեալը եղաւ.

- Ա խմբակ. Պրիսիա Տորթմոնտ, Մանչեսթըր Ինայթըտ, Զոլդերս, Կալաթասարայ, Բ խմբակ. Սելիլիա, Արսենալ, Էստոնիա, Լանս, Գ խմբակ. Նափոլի, Ռեալ Մատրիտ, Փրակ, Ունիոն Պերլին, Դ խմբակ. Պենֆիկա, Ինթեր, Չալցպուրկ, Ռեալ Սոսիտատ, Ե խմբակ. Ֆէյէնորդ, Աթլէթիքօ Մատրիտ, Լացիօ, Սելթիկ, Զ խմբակ. Փարիզ Սան Ճերման, Պորուսիա Տորթմոնտ, Միլան, Նիւքալ Ինայթըտ, Է խմբակ. Մանչեսթըր Սիթի, Լայպցիկ, Յրվենա Չվեգոա, Եանկ Պոյգ, Ը խմբակ. Պարսելոնա, Պորտօ, Շախտար Տոնցկ, Անտվերպէն:
- Առաջին փուլի մրցումները տեղի պիտի ունենան 19 եւ 20 Սեպտեմբերին:

ՀԱԼԱՆՏ ՏԱՐՈՒՄՆ ԼԱՄԱԳՈՅՆ ԿԱՐԱՅՈՂ ԾԱՆՁՅՈՒԵՑԱՒ

Անգլիոյ պիսոյեան, գաւաթակիր, Չեմպիոնզ Լիկի գաւաթակիր, Եւրոպայի տուփըր գաւաթակիր Մանչեսթըր Սիթիի Նորուեյճի յարձակող Էրլինկ Հալատ 2022-2023 տարեշրջանի մրցաշրջանի արդիւնքին համաձայն ճանչցուեցաւ ՌԷՖԱ-ի լաւագոյն ֆուտպոլիստը: Մրցանակին Հալատ մրցակից ունեցաւ նաեւ Մանչեսթըր Սիթիի պէլճիքացի կիսապաշտպան Զեյն տէ Պերուիլը եւ Ֆրանսայի պիսոյեան Փարիզ Սան Ճերմանի ամերիկեան Ինթեր Սիամի տեղափոխուած աշխարհի պիսոյեան, Արժանիքի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսսի:



ԿՈՒՐՏԻՈՆԸ ԼԱՄԱԳՈՅՆ ՄԱՐԶԻՉԻ ԿՈՉՈՒՄԻՆ ԱՐՃԱՆԱՅԱՒ



Անգլիոյ պիսոյեան, գաւաթակիր, Չեմպիոնզ Լիկի գաւաթակիր, Եւրոպայի տուփըր գաւաթակիր Մանչեսթըր Սիթիի գլխավոր մարզիչ Խոսէփ Կուարտիոլա 2022-2023 տարեշրջանի մրցաշրջանին արձանագրած նուաճումներուն շնորհիւ ճանչցուեցաւ տարուան լաւագոյն մարզիչը: Սըրցանակին մաս կազմեցին նաեւ Իտալիոյ պիսոյեան, Նափոլիի իտալացի գլխավոր մարզիչ Լուչիանօ Սպալետին ու Իտալիոյ գաւաթակիր եւ տուփըր գաւաթակիր Միլանի Ինթերի իտալացի գլխավոր մարզիչ Սիմոնէ Ինզակիս:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 454)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոզեան-Պողիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Հետեւեալ բանաստեղծութեան հեղինակը. «Ինչ մնաց, կեանքէն ինձի ի՞նչ մնաց. Ինչ որ տուի ուրիշին. տարօրինակ, այն մնաց. Խանդաղատանը մը ծածուկ, օրհնութիւններ անիմաց, Երբեմն հատուտը սրտիս ու մերթ արցունք մը անձայն...»:
- Ընդդիմաբան: Սեւցած:
- Մայրական սնունդ: Մէկը:
- Օգնել, նպաստել: Վերջ:
- Արական անուն: Գրաբար «ար» բառին սեռական հոլովը:
- Գահավճ:
- Եւ: Վանայ լիճին կղզիներէն:
- Լեցուն: Հակառակ՝ առարկայ: Եական բայ:
- Հայ գուսան: Անգոր: Հակառակ՝ առարկայ:
- Յուզական դերանուն: Հակառակ՝ հաստատական պատասխան:
- Ամենէն առաջ: Կապ:
- Բայական լծորդութիւն: Աւետիք Իսահակեանին տրուած տիտղոս: Երկբարբառ:


Ուղղահայեաց

- Ծամակալ: Իգական անուն:
- Հակառակ՝ տառի մը անունը: Տարածքի միւտը: Յագեալ:
- Ռամբոլեն՝ այր: Փեսային քոյրը: Հակառակ՝ ստամոքսի սուր ցաւ:
- Անվերջնատառ՝ պատահար: Աղբիւր:
- Բնաւորութիւն: Յետոյ:
- Ծանծաղամիտ: Տարածքի միւտը:
- Հակառակ՝ 37: Հակառակ՝ մանկական կոնաճե խաղալիք: Չեւ:
- Հակառակ՝ աղէկ: Չայնաւոր տառեր:
- Կղպանքի ծակ: Տառի մը հարեանները: Կաւէ ամաններ շինող:
- Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ 7001: Զրիստոնէութիւնը: Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուելու թուականը:
- Չայնաւոր տառեր: Երկէ՛կ:
- Հակառակ՝ 4400: Հակառակ՝ թշնամական գաղտնի գործունէութիւն: Արգելական: Տառի մը անունը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 453)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ն	ա	գ	ե	լ	ա	ճ	ե	մ	ն	ք	
2	ի	ա	ր	ի				լ	ա	ր	ա	
3	կ	ա	ն	ա	մ	բ	ի	ն	ա	ն	ն	
4	ն		գ	մ	գ			հ	ա	ն	ա	ք
5	լ		ն					գ	ն	ի	լ	ա
6	դ	ի	գ	ե	լ			ա	գ	ն	ի	ք
7	ն	ն	գ	ե	լ				ւ	ա	կ	
8	ւ		ւ	ք	կ	ա	դ	ն	ի	ի		
9	մ	ա	ր	գ	ա	ր	ի	տ		ք	է	
10	ա	ն	ն	ն	ա	գ	ն	լ	ի	ա		
11	ն	ն	չ	է		ի	ա	ն	ա	կ		
12	ա		ր	ի		չ	ն	չ	ի	ն		

ԼՈՒՐԵՐ





ԳԱՄԻՇՆԻ ՄԵՋ ՀԱՅԵՐՈՒ, ԲԻԻՏԵՒ...

Սկիզբ՝ Էջ 1

սենեակի պատասխանատու ներկայացուցիչներ, արաբ Շամար եւ Թայ, ինչպես նաեւ քիւրտ աշիրապետներ, Պատկան Մարմինի, ազգային եւ միութենական կազմերու անդամներ եւ հոծ բազմութիւն:

Հաւաքը սկսաւ Սուրիոյ, Հայաստանի եւ Արցախի քայլերգներով, որմէ ետք տեղի ունեցաւ Արցախի Հանրապետութեան դրօշի օրհնութիւնը ու ՀԱԸՄ-ի սկիւտներու ձեռամբ ծածանեցաւ Արցախի դրօշը:

Հանդիսավար Դաւար Մարտիրոսեան-Սիմոնեան իրաւորեց Յակոբ Պարսումեանը՝ ուղղելու Սուրիոյ Հայ Դատի Գամիշլիի եկեղեցիներու մասին հայերէն խօսքը: Պարսումեան ըսաւ. «Ինը ամիս է ի վեր Արցախ կը գտնուի շրջափակման մէջ, իսկ պատանդ դարձած արցախահայութիւնը կ'ենթարկուի անթաքոյց ցեղասպանութեան: Այս ընթացքին սփռաբաշխութիւնը իր ամբողջական զօրակցութիւնը ի սպաս կը դնէ Արցախին եւ աշխարհով մէկ կը ձեռնարկէ զօրակցական հաւաքներու՝ միջազգային հանրութիւնը շտապ աշխատանքի մղելու եւ փրկելու աւելի քան 120.000 հայերու վտանգուած կեանքը իրենց պատմական հայրենիքին մէջ»:

Արաբերէն խօսք արտասանեց Ռիթա Տեր Սարգիսեան-Կարապետեան: Ան անդրադարձաւ արցախահայութեան պապեանական իր հողին վրայ ազատ իրաւունքին, ապա դատապարտեց քաղաքականութիւնը Ատրպէյճանի, որուն բռնապետական վարչակարգը կը շարունակէ շրջափակումը, իսկ քաղաքակիրթ կոչուած աշխարհը կը շարունակէ լուր մնալ ի տես այս անամարդկային արարքին:

Այնուհետեւ յաջորդաբար Գամիշլիի անտարանական եկեղեցւոյ իոզելոր հովիւ Տեր Ֆիրաա Ֆարահ, «Պաաս» կուսակցութեան ներկայացուցիչ Մուհամետ ալ-Տայֆ, քրտական Թայ աշիրեթի ներկայացուցիչ Շէյխ Մուհամետ Ապտուլ Ռազաք խօսքեր արտասանելով իրենց զօրակցութիւնը յայտնեցին արցախահայութեան՝ դատապարտելով Ատրպէյճանը եւ անոր գիւնակից Թուրքիան, որ լոյն քաղաքականութեամբ ճնշում կը բանեցնէ Սուրիոյ ժողովուրդին վրայ, մասնաւոր գրկելով Հասիչէն ջուրի մատակարարումն եւ թիկունք կանգնելով ահաբեկչական խմբաւորումներուն: Անոնք յայտնեցին, որ ՄԱԿ-ը ցեղասպանութիւն կ'անուանէ ողբերգական կենսապայմաններու միտումնաւոր ստեղծումը խումբի մը՝ անոր ֆիզիքական ամբողջական կամ մասնակի ոչնչացման համար, շեշտեցին նաեւ, որ Արցախի եւ Լաչինի միջանցքին շրջափակումը միայն հայ ժողովուրդին հարցը չէ, այլեւ՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, որովհետեւ մարդկութեան դէմ ուղղուած ոճիրներ կը գործուին եւ արդարութիւն հաստատելու խնդիր կայ:

Հունկ իր հայրական օրհնութիւնը տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Սրբ. Ազգարեանը, ողջունելով ներկայ հիւրերը, որոնք եկած են մեր կողքին կենալու եւ մեզի հետ արդարութեան կանչը ինչեցնելու:

Այսօր աշխարհով մէկ հայ ժողովուրդը եւ իր կողքին գտնուող բոլոր այն մարդիկ, որոնք արդարութեան յաղթանակին կը հաւատան, ահաւասիկ եկած են ու մեր կողքին կանգնած՝ ամիսներ առաջ արիւնսարբու թուրքին եւ իրեն գործակից Ատրպէյճանի կողմէ շրջափակուած եւ կենցաղային ամեն կարելիութեամբ զրկուած հայերուն իրաւունքը պահանջելու:

«Միդելի՛ արցախցիներ, արդարութեան հետեւորդներ, լոյսի, յարութեան եւ յաղթանակի գաւակներ, պիտի շարունակենք արդարութիւն պահանջել մինչեւ որ արդարութիւնը յաղթանակէ: Առանց յուսահատելու պիտի շարունակենք կոչ ուղղել ողջ մարդկութեան եւ բոլոր այն պետութիւններուն, որոնք մարդկային իրաւունքներու պաշտպանութեան անունով կը գործեն, բայց սեփական շահերը կը հետապնդեն, արթննալու, որպէսզի մարդկային խիղճն ու արդարութիւնը յաղթանակեն վերջապէս»:

Այնուհետեւ բժշկի. Մարի Մելքոնեան-Պետրոսեան ընթերցեց ՄԱԿ-ին ուղղուած բողոքագիրը, ուր կը դատապարտուէր Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակումը:

Սոյն բողոքագիրը ստորագրուեցաւ ներկայ պատասխանատուներուն կողմէ:

Մեքերումներով ելոյթ ունեցան Սուրիոյ Երիտասարդական Միութեան «Նիկոլ Դուման» մասնաճիւղի եւ Պատանեկան Միութեան «Չաւարեան» մասնաճիւղի անդամներ՝ արաբերէն եւ հայերէն լոզունքներ արտասանելով: